«ԽՈՅԱՆՔ» ՍՊԸ

Լիցենզիա N-ՔՊԼ 001379, 1-ին դաս

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն:
Պայմանագիր՝ N ՀՀԿԳՄՍՆԳՀԾՁԲ-24/84

# ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՆԱԽԱԳԻԾ

«Երևանի պարարվեստի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի
վերանորոգման աշխատանքների նախագծանախահաշվային
փաստաթղթերի մշակման ծառայություններ

Գիրք-1 Բացատրագիր: Ելակետային նյութեր:

«ԽՈՅԱՆՔ» ՍՊԸ.

Տնօրեն՝ Է. Հովսեփյան

ՆԳՃ՝ Է. Հովսեփյան

Հրազդան 2025թ

## ՆԱԽԱԳԾԻ ԿԱԶՄԸ

Գիրք-1 Ընդհանուր բացատրգիր, Ելակետային նյութեր,

Գիրք-2 Շինարարության արտադրության կազմակերպում

Գիրք-3 Ճարտարապետաշինարարական մաս

Գիրք-4 Էլեկտրոտեխնիկական մաս, Հակահրդեհային ազդարարում, Տեսահսկման համակարգ, Լոկալ ցանց և հեռախոսակապ,

Գիրք-5 Ներքին ջրամատակարարում և ջրահեռացում, Տաք ջրամատակարարում, Ինքնաշխատ հրդեհաշիջման համակարգ:

Գիրք-6 Օդափոխություն և օդի լավորակում

Գիրք-7 Նախահաշիվ

# Աշխատանքային նախագիծ
# Բացատրագիր

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության հետ «15 01 2025թ.-ին կնքված «ՀՀԿԳՄՍՆԳՀԾՁԲ-24/84» ծածկագրով «Երևանի պարարվեստի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի վերանորոգման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման ծառայությունների ձեռքբերում՝ փաստաթղթերի մշակման շրջանակում իրականացվող «Աշխատանքային նախագիծ»-ը բաժինը ներկայացվում է Պատվիրատուին՝ համաձայն պայմանագրի «ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ-ի պահանջի. իրականացվող աշխատանքների նախագծային լուծումները Պատվիրատուի հետ նախնական համաձայնեցման համար։

«Աշխատանքային նախագիծ»-ով ներկայացված նախագծային լուծումները իրականացված են համաձայն պայմանագրի տեխնիկական առաջադրանքի և ՀՀ տարածքում գործող շինարարական նորմերի և ստանդարտների պահանջների համաձայն։

Նախագծով ներկայացված տեխնիկական լուծումներն ապահովում են կրթական համալիրի սաների կեցության, առողջության, անվտանգային, սանիտարական պայմանները։ Ապահովում են նաև օբյեկտի արդյունավետ շահագործումը, հարակից տարածքների անվտանգ օգտագործումը։

**Նախագծվող կառույցում տեղակայված կազմակերպությունների նկարագիրը՝**

«Երևանի պարարվեստի պետական քոլեջ» ՊՈԱԿ գտնվում է Երևան քաղաքի Մոսկովյան և Բայրոնի փողոցների հատման հատվածում, կառույցը շարունակվում է Մարկ Գրիգորյան փողոցի ուղղությամբ /Սայաթ-Նովայի անվան երաժշտական ուսումնարանին պատկանող հատվածով/։

**Նախագծվող օբյեկտի նկարագիրը՝**

- ըստ հասարակական նշանակության հանդիսանում է - կրթական և ուսումնական նշանակության շենք
- ըստ հանրակրթական հաստատությունների դասակարգման հանդիսանում է - վարժարան 5-ից 12-րդ դասարանների կազմով
- ֆունկցիոնալ հրդեհային վտանգի դաս –Գ4.1 (Ֆ4.1)
- կոնստրուկտիվ հրդեհադիմադրության աստիճան – III
- կառուցվածքային հրդեհային վտանգի դաս – C2;

«Երևանի պարարվեստի պետական քոլեջ» ՊՈԱԿ գտնվում է ք. Երևան Բայրոնի-5 հասցեում։ Շենքը կառուցված է 20-րդ դարի 50-ական թվականներին։

«Երևանի պարարվեստի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի շենքի կառուցվածքը՝

Շենքն ունի П-աձև հատակագծային լուծում, բաղկացած է մեկ նկուղային և երեք վերգետնյա հարկերից։

Վերգետնյա հատվածում՝ հողի նիշից մոտ երկու մետր բարձրության պատերը կառուցված են բազալտե շարվածքով, մնացած մասերում՝ ամբողջ բարձրությամբ արտաքին պատերը կառուցված են տուֆ քարով՝ «Միդիս» շարվածքով։ Ճակատային կողմերից, Մոսկովյան և Բայրոնի փողոցների կողմից արտաքին պատերը սրբատաշ են, բակի կողմից՝ ցեմենտավազե սվաղ։

Անհրաժեշտություն կա շենքի ճակատը Մոսկովյան և Բայրոնի փողոցների կողմից ջրաշիթով մաքրել։

Արտաքին և ներքին կրող պատերի շարվածքի հաստությունը 70սմ է։ Միջնորմների շարվածքի հաստությունը հիմնականում 20սմ է, որոշ տեղերում՝ 10սմ։ Նկուղային հարկում միջնորմները հիմնականում քայքայված են, կրող պատերից և առաստաղներից

առանձնացված: Նկուղային հարկի քայքայված միջնորմները անհրաժեշտ է ամբողջությամբ քանդել և նորը կառուցել, համաձայն նոր հատակագծային լուծումների:

Միջհարկային ծածկերը իրականացվել են միաձույլ երկաթբետոնից, որոշ հատվածներում ծածկերը իրականացվել են փայտով:

Տանիքը իրականացված է փայտյա կոնստրուկցիաներով: Տանիքի ծածկը իրականացված է պողպատյա սև թիթեղով, տանիքածածկը ներկված է յուղաներկով: Տանիքի երկու հատված 211,6քմ և 61,1քմ մակերեսներով քայքայված են, անհրաժեշտություն կա փոխելու:

Բացակայում է հենաշարժային համակարգի խախտումներ և հաշմանդամություն ունեցող անձանց մատչելի տեղաշարժն ապահովող լուծումները: Անհրաժեշտ է մասնաշենքը ապահովել պահանջվող սարք-սարքավորումներով՝ թեքահարթակներ, առանձնացված սանհանգույցներ՝ համապատասխան ինվենտարով, բազրիքներ, լրացուցիչ լուսավորություն և վերելակ:

Մասնաշենքը չունի տաք ջրամատակարարում: Տաք ջրամատակարարում ապահովելու նպատակով անհրաժեշտ է գոյություն ունեցող կաթսայատան տարածքում լրացուցիչ տեղադրել 100Կվ հզորության գազի տաք ջրամատակարարման կաթսա:

**Կատարվող աշխատանքներ՝**

Ղեկավարվելով պայմանագրի տեխնիկական առաջադրանքով, գնահատելով վերանորոգվող օբյեկտի տեխնիկական վիճակը, ուսումնասիրելով գոյություն ունեցող ինժեներական ցանցերի աշխատանքը, բացակա ցանցերի նախագծման անհրաժեշտությունը, ինչպես նաև ուսումնական կազմակերպության գործունեությունը անհրաժեշտ մակարդակով ապահովման պահանջները: Նախագծային կազմակերպության կողմից իրականացվում են նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքներ հետևյալ կազմով և լուծումներով.

**ա/ համաշինարարական աշխատանքներ՝**

- Աշխատանքային նախագիծ փուլում Պատվիրատուի կողմից համաձայնեցման նպատակով ներկայացվում են հատակագծային փոփոխություններ: Հատակագծում նշված 64, 65, 66 պարասրահների սաների համար ըստ նոր հատակագծային լուծումների՝ նախատեսված են հանդերձարաններ սանիտարական հանգույցներով և ցնցուղներով: Հատակագծում նշված 31 և 32 սանիտարական հանգույցներով և ցնցուղարաններով հանդերձարաններ նախատեսված են սպորտ դահլիճում պարապող սովորողների համար, սպորտ դայլիճում պարապմունքներից դուրս, հանդիսությունների դահլիճում միջոցառումների ժամանակ նշված հանդերձարանները կարող են ծառայել որպես դերասանների հանդերձարաններ: Նկուղային և մնացած հարկերում գտնվող սանիտարական հանգույցների միջնորմները քանդվում են, նրանց փոխարեն տեղադրվում են նոր միջնորմներ: Բոլոր սանիտարական հանգույցերը ամբողջությամբ վերանորոգվում են, փոխվում են նաև սանիտարական սարքավորումները:

  Նկուղային հարկում գտնվող ճաշարանի հատակագծային լուծումները փոխվում են և բերվում ներկայումս գործող սանիտարական նորմաների պահանջների:

  Հաշմանդամություն ունեցող անձանց համար հատակագծում նշված թիվ-63 աստիճանավանդակի հատվածից նախատեսվում է իրականացնել մուտք: Այս հատվածում բակի և աստիճանավանդակի նիշերը համընկնում են: Համընկնում են նաև 0,000 նիշում գտնվող ուսումնարանի գլխավոր մուտքի և նախասրահի նիշերը, նախասրահի ներսում հատվածների միջև եղած 0,45մ նիշեր տարբերությունը հաշմադամների կողմից հաղթահարելու համար նախատեսվում է տեղադրել թեթև կոնստրուկցիայից թեքահարթակ:

Նկուղային հարկում նախատեսված է սանիտարական հանգույց հաշմանդամություն ունեցող անձանց համար:

- Նախագծով նախատեսվում է նաև քայքայված տանիքի ծածկի երկու՝ 211,6քմ և 61,1քմ մակերեսներով հատվածների փոխարինում:

**Նախագծով նախատեսվում է՝**

**Քանդման աշխատանքներ՝** Պատերի գաջի սվաղի քանդում, հատակների քանդում, պատուհանների և դռների քանդում:

**Կատարվող աշխատանքներ՝**

- Նկուղային հարկում միջնորմների քանդում, ըստ ներկայացված հատակագծային լուծումների՝ նոր միջնորմների կառուցում: Նկուղային հարկի պատերի գաջի սվաղի քանդում, նոր կառուցված միջնորմների և սվաղից մաքրված պատերի գաջի սվաղում: Մնացած հարկերում փչացած հատվածներում գաջե սվաղի քանդում, նորի իրականացում: Հիմնական՝ բավարար վիճակում գտնվող պատերի գաջի սվաղի վերանորոգում գիպսոնիտով՝ քսահարթեցմամբ: Միջանցքի, դասասենյակների, վարչական սենյակների պատերի ներկում բարձրորակ լատեքսային ներկով: Ճաշարանի խոհանոցային հատվածի, սանիտարական հանգույցների, ցնցուղարանների պատերի երեսապատում կերամիկական սալիկներով: :
- Միջանցքներում արմսթրոնգ, կախովի առաստաղի իրականացում: Դասասենյակների և վարչական սենյակների կախովի առաստաղների իրականացում գիպսաստվարաթղթից 600x600x8մմ չափսերի սալիկներով, ցինկապատ պրոֆիլավոր հիմնակմախքի վրա: Սանիտարական հանգույցների, ցնցուղարանների ցինկապատ պրոֆիլավոր հիմնակմախքի վրա պլաստմասսից կախովի առաստաղների իրականացում:
- Հատակների կառուցում՝ միջանցքների, ճաշասրահի հատակների իրականացում մամլոգրանիտե սալերով: Դասասենյակներում և վարչական սենյակներում կառուցել լամինատե հատակներ: Պարասրահներում իրականացնել վինիլային հատակներ փայտյա հիմքի վրա: Ճաշարանի խոհանոցային հատվածում, ինչպես նաև սանիտարական հանգույցերում տեղադրել կերամիկական սալիկներց հատակներ: Նկուղային հարկում պահեստային և որոշ տնտեսական սենյակներում կառուցել բետոնե հատակներ: Նկուղային հարկի հատակները ամբողջությամբ քանդել և նորը կառուցել՝ ըստ ներկայացված կոնստրուկտիվ շերտերի:
- Ներքին դռների տեղադրում, նոր տեղադրվող  դռները պետք է իրականացվեն նախագծում ներկայացված նկարվածքին համապատասխան և ապահովեն բարձր որակային հատկություններ:
- Աստիճանավանդակի ճաղաշարերի փոխարինում և աստիճանների երեսապատում մամլոգրանիտե սալիկներով;
- անվտանգության համակարգերի կառուցում շենքի ներսում և շենքի տարածքում, նախատեսվում է մուտքի վերականգնում և աստիճանավանդակի վերանորոգում, նոր բազալտե սալիկներով երեսպատում;
- արտաքին հարդարում՝ Բայրոն-Մոսկովյան փողոցների կողմից, ճակատների ջրաշիթով մաքրում:
- ճակատի վերականգնման անհրաժեշտություն չկա:

### Կառույցի պատող կոնստրուկցիաների էներգոարդյունավետություն

Շենքի նախագծային լուծումները՝ նախատեսված կառույցի պահանջվող ջերմամեկուսիչ բնութագրերի պահպանմամբ:

**Կառույցի պատող կոնստրուկցիաների ջերմային դիմադրության պարամետրերը՝**

Պատերի ջերմային դիմադրության տվյալները հետևյալն են՝

Շենքի պատերը կառուցված են 700մմ հաստության Միդիս տուֆ քարե շարվածքով:

Շենքի պատող կառուցվածքները համապատասխանում են տվյալ տարածաշրջանի ջերմամեկուսիչ պահանջներին:

Ջերմային էներգիայի խնայողության նպատակով մատակարարման և արտանետման օդափոխության համակարգում նախատեսվում են.

- Ջերմության ռեկուպերացիայի կիրառումը,
- Օդափոխության համակարգերի անջատումը չաշխատող ժամերին,
- Շահագործման թերությունների և նախագծային շեղումների վերացումը,
- Օդափոխության համակարգերի ավտոմատացված կառավարումը,
- Հաշվարկային պայմանների ճշգրտում (արտաքին և ներքին օդի հաշվարկային ջերմաստիճանների ընտրություն, անհրաժեշտ քանակությամբ մաքուր օդի ապահովում):

Էլեկտրամատակարարման համակարգում նախագծով նախատեսված են հետևյալ միջոցառումները էլեկտրաէներգիայի խնայողության համար.

- Պղնձե մազերով մալուխների կիրառումը,
- Էլեկտրոնային շիկացման լամպերի (ԷՊՐԱ) օգտագործումը:

### Ներքին ինժեներական ենթակառուցվածքների՝
### Էլեկտրամատակարարման համակարգ

Երևանի պարարվեստի պետական քոլեջ ՊՈԱԿ-ի լուսավորության նախագիծը մշակվել է հիմք ընդունելով պատվիրատուի առաջարկը՝ ելնելով էլեկտրոտեխնիկական նորմատիվային փաստաթղթերից, որոնք տարածվում են էլեկտրական լուսավորության և ուժային ցանցերի վրա: Շենքի լուսավորության և ուժային ցանցի էլեկտրական սխեման կառուցված է հետևյալ ձևով.

Շենքի յուրաքանչյուր հարկում տեղադրվում են երկուական բաշխիչ վահաններ, որոնք սնվում են կիսանկուղային հարկում գտնվող մուտքային բաշխիչ սարքից (ՄԲՍ) մեկ մուտքով ВВГнг-LS 5x10մմ2 կտրվածքի մալուխով:

Կիսանկուղային հարկում գտնվող ճաշարանի ուժային սարքավորումները սնվում են էլեկտրովահանի սենքում տեղադրված 1-3 բաշխիչ վահանից: Ճաշարանի ուժային մասի (ինչպիսիք են էլեկտրական վառարանը, պատրաստի մթերքի բաշխման կետը, կոնվեկցիոն վառարանը և այլն) մալուխների մոնտաժը կատարել հատակի սալահատակի տակով նախօրոք մալուխները անցկացնելով պլաստմասե 50մմ տրամագծով պաշտպանիչ խողովակի միջով: Էլեկտրընդունիչների գումարային հզորությունը կազմում է Py=232.61կՎտ, իսկ հաշվարկային հզորությունը՝ Pp=193.3կՎտ, հաշվի առնելով, որ cosf=0.93-ի:

Նախագծում ընդունված լուծումները Կիրառել TИ-C-S սիստեմը եռաջիղ հաղորդալար միաֆազ էլեկտրընդունիչների և հնգաջիղ մալուխ եռաֆազ էլեկտրընդունիչների համար: Էլեկտրընդունիչները սնվում են շենքի հարկերի միջանցքներում տեղադրված բաշխիչ վահաններից: Հաղորդալարերի հաշվարկային կտրվածքը և պաշտպանիչ նոմինալ հոսանքը ընտրված է ելնելով սպառիչների հզորությունից:

Վարդակների և լուսատուների սնուցման համար ընտրված է միաֆազ եռաջիղ ВВГнг տիպի հաղորդալար , խոր հողանցման զրոյական ջիղով 220Վ 50Հց լարումով:

Բաշխիչ վահաններում հաղորդալարերի զրոյական ջիղը միացվում է պոտենցիալների հավասարակշռման շինային 24 տեղով, իսկ հողանցումը միացվում է բաշխիչ վահանի իրանին:

*Ցուցում մոնտաժի վերաբերյալ*

Էլեկտրամոնտաժային աշխատանքները կատարել համապատասխան տրված էլեկտրական սկզբունքային սխեմայի՝ պաշտպանելով անվտանգության կանոնները:

Լուսավորության ցանցի մոնտաժը կատարել ВВГнх 3x 1.5մմ,իսկ վարդակների ցանցի մոնտաժը՝ ВВГнг 3x2.5մմ կտրվածքի հաղորդալարով, նախապես այն տեղադրելով 25մմ տրամագծով ճկախողովակի մեջ:

ՄԲՍ-ից սնվող հարկային բաշխիչ վահանների սնող մալուխները մոնտաժել շենքի կիսանկուղային հարկի միջանցքի առաստաղին նախօրոք մոնտաժված սակառների միջով ,իսկ մյուս հարկերի բարձրացումը կատարել պատերի խորշերի միջով, ինչպես ցույց է տրված գծագրում:

Տեխնոլոգիական սարքավորումների միացումը կատարել համաձայն արտադրողի ներկայացրած պահանջի:

Լուսավորության անջատիչները տեղադրել հատակից 1,4մ դռան բռնակի կողմից, իսկ վարդակները՝ 0,2մ բարձրության վրա:

Հաղորդալարերի ջիղերի գունային երանգը ըստ ԷՏԿ-ի՝

Աշխատանքային զրոյական ------կապույտ

Զրոյական պաշտպանիչ ----------կանաչ-դեղին

Գծային աշխատանքային ---------սև -սպիտակ- կարմիր

ՄԲՍ-ի և բաշխիչ վահանների պաշտպանության աստիճանը չպետք IP31-ից ցածր լինի: ՄԲՍ-ի իրանը հողանցվում է այն եռակցելով առկա հողանցման համակարգին:

## Ջեռուցման, օդափոխության և օդորակման համակարգեր

### *Ջեռուցում*

Երևանի պարարվեստի ուսումնարանի մասնաշենքն ունի ջեռուցման համակարգ: Ջեռուցման համակարգի ջերմային էներգիայի աղբյուրը բնական գազն է: Մասնաշենքի ջեռուցման համակարգի սնուցումը իրականացվում է մասնաշենքին կից տեղադրված կաթսայատնից: Կաթսայատունը ապահովում է նաև շենքում գտնվող Սայաթ-Նովայի անվան երաժշտական ուսումնարանին և Համահայկական խաղերի համաշխարհային կոմիտեին պատկանող տարածքները: Մասնաշենքում իրականացված է վերին մատակարարման ջեռուցման համակարգի սխեմայով:

Շենքի տարածքը տարբեր կազմակերպությունների միջև բաժանված է անկանոն, հարկերում կազմակերպություններին պատկանող տարածքները չեն համընկնում միմյանց իրենց հատակագծային կառուցվածքով: Մեկ առանցքի վրա գտնվող սենքերը տարբեր հարկերում պատկանում են տարբեր կազմակերպությունների, ինչը բացառում է ջերմային ցանցի կանգնակների փոխման հնարավորությունը:

Ընդհանուր առմամբ Երևանի պարարվեստի ուսումնարանի մասնաշենքի ջեռուցման համակարգը գտնվում է բավարար վիճակում:

Նախագծային աշխատանքների ընթացքում կիրականացվի առկա ջեռուցման սարքավորումների գույքագրում, կգնահատվի յուրաքանչյուր սարքավորման վիճակը և ըստ գնահատականի կիամալրվի կամ կփոխարինվի նորով:

## Օդափոխություն

Շենքում բացակայում է օդափոխության համակարգը: Նախատեսվում է նախագծել նորը՝ մատակարարման և արտանետվող օդափոխությամբ մեխանիկական և բնական խթաններով՝ գործող նորմատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան :

Մատակարարման օդը մատակարարվում է PE-1 և PE-2 մատակարարման համակարգով: Վարչական սենյակում օդի ներհոսքն իրականացվում է դռան բացվածքով և դռան ստորին կտրվածքով: Օդի քանակը վերցվում է մեկ անձի համար ժամում 30 խորանարդ մետր արագությամբ:

Օդաքաշումն իրականացվում է B1, B2 և B3 համակարգերի միջոցով:

Մատակարարման և արտանետման համակարգերը տեղակայվում են սպասարկվող տարածքների առաստաղի տակ, կախովի առաստաղի հատվածում:

Օդատար խողովակները պատրաստված են ցինկապատ պողպատից:

## Օդորակում

Տարվա տաք սեզոնին ավելորդ ջերմությունը հեռացնելու համար՝ ուսումնական, մարզական սենյակները, պարապրահների տարածքները հագեցած են օդորակման համակարգով: Որպես օդորակման համակարգ ՝օգտագործվում է պատին ամրացված սպլիտ համակարգը: Կոնդենսատը ներքին բլոկից արտահոսում է շենքի ջրահեռացման մեջ, մի մասն էլ հեռացվում է անձրևի արտահոսքի մեջ:

## Ջրամատակարարում և ջրահեռացում, կոյուղի

Երևանի պարարվեստի ուսումնարանի մասնաշենքի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերը միացված են Երևան քաղաքի ջրամատակարարման և ջրահեռացման ցանցին:

Ներկայումս գործող բոլոր սանիտարական հանգույցները ամբողջությամբ վերանորոգվում են: Տեղադրվում են նոր միջնորմներ՝ դռներով, տեղադրվում են նոր սանիտարական սարքավորումներ: Վերականգնվում են ցնցուղարանները: Ամբողջությամբ փոխվում են նաև ներքին ջրամատակարարման և ջրահեռացման խողովակները:

Նկուղային հարկում նախատեսվում է կառուցել նոր սանիտարական հանգույցներ: Հանդերձարաններին կից սանիտարական հանգույցները ունեն նոր ցնցուղարաններ: Նոր կառուցվող սանիտարական հանգույցների համար նախատեսվում է տեղադրել ջրամատակարարման և ջրահեռացման խողովակաշարեր:

Մասնաշենքը չունի տաք ջրամատակարարում: Տաք ջրամատակարարում ապահովելու նպատակով նախատեսվում է գոյություն ունեցող կաթսայատան տարածքում լրացուցիչ տեղադրել 100Կվ հզորության գազի տաք ջրամատակարարման կաթսա: Տաք ջրամատակարարման ցանցը նախատեսվում է միացնել բոլոր սանիտարական հանգույցների լվացարանները, ցնցուղարանները: Զուգարանակոնքերի մոտ նախատեսվում է տեղադրել հիգիենիկ ցնցուղներ:

Անվտանգության տեսահսկման համակարգ (ԱՏՀ)

Տեսահսկման համակարգի նախագծի աշխատանքային գծագրերը մշակվել են գործող կանոններին և կանոնակարգերին համապատասխան: Ըստ նախագծի՝ տեսահսկումը իրականացվում է գլխավոր մուտքի բակում, ֆոյեում, միջանցքներում, ճաշարանում և ճաշարանի մուտքի բակում, պահեստի բակում, հարկերի միջանցքներում և աստիճանավանդակներում, տնօրենի ընդունարանում, սպորտ դահլիճում և պարասրահներում: Տեսաինֆորմացիան գրանցելու և ցուցադրելու նպատակով օգտագործվում են դրսի և ներսի տեսախցիկներ, PoE տիպի կոմուտատորներ, թվային տեսագրանցող սարքեր և մոնիտորներ, որոնք տեղադրվում են պահակային ծառայության սենյակում: Տեսահսկման համակարգի մալուխները տեղադրվում են հակահրդեհային ազդարարման և լոկալ ցանցի համար նախապատրաստված առաստաղին ամրացված սակառում, ապահովելով էլեկտրահաղորդալարերի տուփերից, էլեկտրական լարերից առնվազն 0,5 մետր հեռավորությունը: Օգտագործվող տեսախցիկների, գրառող սարքի և մոնիտորի տիպերը բերված են մասնագրում: Տեսահսկման համակարգը ապահովված է նաև անախափան սնուցման մարտկոցներով:

Լոկալ ցանց, Հեռախոսակապ

Երևանի պարարվեստի պետական քոլեջի Լոկալ ցանցի և հեռախոսակապի (Ինտերնետ կապ, ռադիոկապ) նախագիծը մշակված է միջազգային ստանդարտների նորմերին համապատասխան: Լոկալ ցանցը հնարավորություն է տալիս ցանցը կազմող սարքավորումների միջև կատարել տվյալների և ռեսուրսների արագ փոխանակում: Սա թույլ է տալիս օգտատերերին արագ և հարմար կերպով փոխանցել ֆայլերը, տպել փաստաթղթեր, տեսապրոեկտորներով կազմակերպել ուսումնական տեսանյութերի ցուցադրում, համագործակցել նախագծերի վրա և կիսվել տեղեկատվություններով՝ հեշտացնելով աշխատանքային հոսքը և բարձրացնելով աշխատանքի արդյունավետությունը: Բացի այդ, տեղական ցանցը տրամադրում է տվյալների կառավարման և անվտանգության հնարավորություններ: Ցանցի ադմինիստրատորները կարող են կարգավորել ֆայլերի և ռեսուրսների մուտքի իրավունքները, ստեղծել տվյալների պաշտպանություն, վերահսկել օգտվողի գործունեությունը և ապահովել ցանցի անվտանգությունը արտաքին սպառնալիքներից: Ցանցին և հեռախոսակապին միանալու համար RJ45 տիպի վարդակներ են տեղադրվում տնօրենի, աշխատակազմի աշխատասենյակներում, ընդունարանում, դասասենյակներում, համակարգչային դասարանում, մեթոդական կաբինետում, սպորտ դահլիճում, պարասրահներում, հաշվապահության սենյակում, բուժկետում: Ցանցի մալուխները նախատեսված են "U/UTP Cat.6 դասի: Հեռախոսակապինը՝ U/UTP Cat.5: Ըստ նախագծի՝ կատարվում է փակ տիպի մոնտաժ: Հաղորդալարերը ճկախողովակներով, պատի միջով, առաստաղով տեղադրվում են հակահրդեհային, տեսահսկման և լոկալ ցանցի և հեռախոսակապի համար տեղադրված միջանցքների առաստաղներին մոնտաժված սակառներում: Աշխատատեղերից մալուխները միջանցք դուրս են բերվում հակահրդեհային համակարգի լարերի համար բացված պատի անցքերով: Սերվերային սենյակում բացվում է d50 մմ L600 մմ անցք:

## Հրդեհային անվտանգության ապահովման նախագծային լուծումների և միջոցառումների նկարագրությունը

Նախագծով նախատեսվում է կառուցվածքային, ծավալային պլանավորման և ճարտարագիտական տեխնիկական լուծումներ:

Հրդեհային պաշտպանության համար նախատեսված են հետևյալ միջոցառումները.

- ընդունելի նյութերի օգտագործումը շինարարական կառույցներում և շենքի հարդարման համար՝ հրդեհային անվտանգության ստանդարտների և կանոնակարգերի պահանջների հիման վրա.
- տարհանման ելքերի ապահովում և էվակուացման ուղիների կազմակերպում, շենքերից մարդկանց անխոչընդոտ և ժամանակին տարհանման հնարավորություն
- շենքերը հակահրդեհային համակարգերով հագեցնելը.
- պաշտպանիչ միջոցներ էլեկտրամատակարարման համակարգի անվտանգության համար:

Ծրագրում ներառված լուծումներն ապահովում են օդափոխության համակարգի սարքավորումների և համակարգի տարրերի հրդեհային անվտանգությունը՝ կանխելով հրդեհի և այրման տարածումը օդափոխման խողովակների և օդային խողովակների միջոցով:

Նախագիծը նախատեսում է օդափոխության բոլոր համակարգերի և օդորակիչ համակարգերի անջատում հրդեհի դեպքում:

Ջեռուցման և օդափոխության բոլոր սարքավորումները ապահովված են հողակցումով:

### Հրդեհային անվտանգության համակարգեր

Երևանի պարարվեստի պետական քոլեջ ՊՈԱԿ-ը չունի հակահրդեհային ազդարարման համակարգ: Նախագծվել է քոլեջի հակահրդեհային ազդարարման համակարգ: Ըստ նախագծի՝ հակահրդեհային ազդարարման ցանցը բաղկացած է 15 առանձին ինքնուրույն գործող ճառագայթներից: Յուրաքանչյուր ճառագայթում գտնվող ծխային ազդարարիչները աշխատում են ինչպես առանձին, այնպես էլ՝ համատեղ:

Պարարվեստի պետական քոլեջի հարկերի միջանցքներում տեղադրվում են հատուկ սեղմակներ «ՀՐԴԵՀ» մակագրությամբ, որոնք անմիջապես միանում են ընդունող հսկող սարքին:

Քոլեջում նախատեսված է նաև մուտքային դռների վերևում տեղադրել «ԵԼՔ» մակագրությամբ լուսային ցուցանակներ, որոնք սնվում են ընդունող հսկող սարքից: Բացի այդ՝ քոլեջի միջանցքների առաստաղներին մոնտաժվում են ձայնային ազդարարիչներ:

Ընդունող հսկող սարքի սնուցման համար նախատեսված է սնուցում, ինչպես գործող էլեկտրական ցանցից, այնպես էլ՝ վթարային մարտկոցից:

Ծխային ազդարարիչները միացվում են հաջորդաբար, մոնտաժը կատարվում է բաց եղանակով՝ օգտագործելով հրակայուն պաշտպանիչ մեկուսիչ ունեցող համապատասխան կտրվածքի հաղորդալար:

### Պետական քոլեջի հակահրդեհային ջրամատակարարման համակարգ

Պետական քոլեջի հակահրդեհային ջրամատակարարումն ապահովելու համար նկուղային -1-ին հարկում՝ -3.60 նիշում, նախատեսված է պոմպակայան, որտեղ տեղադրված է երկաթբետոնե բաք 6100x4100x2200(H) չափերով և V=25.0x2.2=55.0մ3/ ծավալով:

Պոմպակայանում նախատեսված է մեկ խումբ պոմպային կայանք՝ բաղկացած երեք պոմպերից, նախատեսված՝ ինքնաշխատ հրդեհաշիջման և հրշեջ ծորակների սպասարկման համար, որոնցից

մեկը հիմնական է , մյուսը՝ պահեստային, իսկ երրորդը՝ ժոկոյ պոմպն է մեմբրանային բաքով, որը նախատեսված է համակարգի ճնշման կորուստները կարգավորելու համար: Պոմպային կայանքն ունի հետևյալ պարամետրերը՝ Q=70մ3//ժամ, H=30մ, N=35կՎտ, 380Վ: Պոմպակայանում նախատեսված է նաև դրենաժային պոմպ. մեկը՝ աշխատող, մեկը՝ պահուստային պոմպակայանի ջրահեռացումն իրականացնելու համար՝ Q=6մ3//ժամ, H=10մ, N=1.1կՎտ, 380Վ պարամետրերով: Պոմպերի ավտոմատ և դիստանցիոն միացման դեպքում միաժամանակ լուսային կամ ձայնային ազդանշան է գնում դեպի պահակատուն: Պոմպակայանում բոլոր խումբ պոմպերի աշխատանքները ավտոմատացված են, կապված վթարային վիճակների, ճնշման փոփոխությունների հետ:

Բոլոր հարկերում, բացի ինքնաշխատ հրդեհաշիջման համակարգից, նախատեսված են նաև հրշեջ ծորակներ 2x2.5լ/վրկ ելքով:

## Շրջակա միջավայրի պաշտպանության միջոցառումներ

Օբյեկտի տեխնոլոգիական գործընթացը թափոններ չի առաջացնում և չի ուղեկցվում վնասակար արտանետումներով շրջակա միջավայր (ոչ օդային, ոչ ջրային):

Նախագծվող ինժեներական համակարգերը պատկանում են արդյունաբերական մաքուր կառույցների կատեգորիային: Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման կանոնադրության»՝ նախագծային լուծումներով նախատեսված համակարգերը չեն դասվում էկոլոգիապես վտանգավոր օբյեկտների շարքին:

Օբյեկտի սարքավորումները և մալուխները շահագործման ողջ ընթացքում չեն ունենում բացասական ազդեցություն շրջակա միջավայրի վրա, մասնավորապես՝

- Բոլոր տեղադրվող սարքավորումները չեն առաջացնում աղմուկ, թրթռում կամ այլ ֆիզիկական ազդեցություններ:
- Նախատեսված մալուխները չեն հանդիսանում հաճախական տատանումների աղբյուր, իսկ դրանց պաշտպանիչ շերտերն ու պատյանները չեն արտանետում վնասակար քիմիական նյութեր կամ կենսաբանական թափոններ:
- Օգտագործվող սարքավորումները չեն աղտոտում շրջակա միջավայրը արտանետվող գազերով կամ յուղային-քսուքային նյութերով:

Ընդունված նյութերն ու սարքավորումները ունեն անհրաժեշտ սանիտարահիգիենիկ և հրդեհային հավաստագրեր: Սարքավորումները համապատասխանում են հայկական և եվրոպական էկոլոգիական անվտանգության չափանիշներին:

Օբյեկտի շրջակա միջավայրի վրա ազդեցության նվազեցումը ապահովվում է թափոնների ժամանակավոր պահեստավորմամբ հերմետիկացված տարածքներում, դրանց տեղափոխմամբ լիցենզավորված կազմակերպությունների կողմից, ինչպես նաև մասնագիտացված վերամշակման կայաններում դրանց վերամշակմամբ կամ ոչնչացմամբ:

Թափոնների հավաքման և ոչնչացման կանոնները սահմանվում են սանիտարահամաճարակաբանական կանոններով և «Արտադրական և կենցաղային թափոնների տեղակայման ու վերացման հիգիենիկ պահանջներով»:

Շրջակա միջավայրի աղտոտումը կանխելու համար նախատեսվում է ընտրովի (առանձնացված) թափոնների հավաքում:

Թափոնների տեղափոխումն իրականացվում է լիցենզավորված կազմակերպությունների հետ կնքված պայմանագրերով, որոնք ապահովում են հավաքում, օգտագործում, վնասազերծում,

տեղափոխում: Շինարարական աղբի տեղափոխման պայմանագրերը պետք է կնքվեն նախքան շինարարության մեկնարկը:
Շրջակա միջավայրի վրա վնասակար ազդեցության բացակայության պատճառով հատուկ շրջակա միջավայրի պահպանության միջոցառումներ չեն նախատեսվում:

**Սանիտարահիգիենիկ պահանջների ապահովման միջոցառումների և նախագծային լուծումների համապատասխանությունը լուծումներին**

Շենքերի ջեռուցման և օդափոխության համակարգերը ապահովում են միկրոկլիմայի և օդային միջավայրի ընդունելի պայմաններ:
Աղմուկը և ներքին աղմուկի թրթռումը նվազեցնելու միջոցառումները (ինժեներական սարքավորում) ապահովում է աղմուկի մակարդակները նորմայի սահմաններում:
Տարածքն ապահովված է բնական լուսավորությամբ:
Ընդունված նյութերն ու սարքավորումները ունեն բոլոր անհրաժեշտ սանիտարահիգիենիկ պայմանները և հրդեհային վկայականները:
Սարքավորումները համապատասխանում են հայկական և եվրոպական բնապահպանական անվտանգության ստանդարտներին:

Նախագծի գլխավոր ճարտարագետ՝ Է. Հովսեփյան

*Հավելված N 1*
*« 15 » 01 2025թ. կնքված*
*«ՀՀԳՄՍՆԳՀԾՁԲ-24/84» ծածկագրով պայմանագրի*

## ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

| Հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | Գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | Անվանումը | Տեխնիկական բնութագիրը | Չափման միավորը | Ենթակա է գնման համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում | | Մատուցման | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | Քանակը | գինը ՀՀ դրամ | հասցեն | Ժամկետը |
| 1 | 71241200/ 523 | Նախագծերի պատրաստում, ծախսերի գնահատում | «Երևանի պարարվեստի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի վերանորոգման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման ծառայությունների ձեռքբերումը՝ ըստ Աղյուսակ N 1-ի (Նախահաշվային փաստաթղթերի մշակման ծառայությունների ներկայացվող պահանջներ):<br>Մատուցման ենթակա (նախատեսվող) ծառայությունների համառոտ բնութագիրը՝<br>**Նախատեսվում է մշակել նախագծանախահաշվային փաստաթղթեր՝ հետևյալ կազմով.**<br><u>ուսումնասիրել,</u><br>- շենքի տարածքը, կատարել համապատասխան չափագրման աշխատանքներ,<br>- արտաքին հաղորդակցուղիների տեխնիկական վիճակը,<br>- ներքին ինժեներական ենթակառուցվածքները կոյուղու, սառը և տաք ջրամատակարարման և ջրահեռացման, էլեկտրամատակարարման, օդափոխության, կապի, հակահրդեհային ազդանշանման, հրդեհաշիջման, գազամատակարարման, ջեռուցման և այլն/ տեխնիկական վիճակը, ձեռք բերել եզրակացություններ և իրականացնել հատակագծային լուծումների տեխնիկատնտեսական հիմնավորում:<br>**Ուսումնասիրությունների արդյունքների հիման վրա նախագծանախահաշվային փաստաթղթերով նախատեսել՝**<br>• Ներքին ինժեներական ենթակառուցվածքների՝ էլ. մատակարարման, օդափոխության, ջրամատակարարման և ջրահեռացման, կոյուղու, հակահրդեհային ազդանշանման, հրդեհաշիջման, տեսահսկման, կապի, անվտանգության համակարգերի կառուցում շենքի ներսում և շենքի տարածքում, ներքին հարդարման, արտաքին հարդարման և ճակատի վերականգնման /ըստ անհրաժեշտության/ աշխատանքներ, հաշմանդամություն ունեցող անձանց համար շահագործման մատչելիության, էներգաարդյունավետության, էներգախնայողության, քաղաքացիական պաշտպանությանն ուղղված միջոցառումներ:<br>• Նախատեսել նկուղային հարկի ջրամեկուսացում | դրամ | 1 | 7950000 | ՀՀ, Երևան, Վազգեն Սարգսյան 3 Կառավարական տուն 2 | Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից հետո ըստ Աղյուսակ 1-ում սահմանված ժամանակացույցի |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | • Նախատեսել փայտե և մետաղապլաստե դռների և վնասված պատուհանների ապամոնտաժում և նոր ջերմամեկուսիչ փաթեթով պատուհանների /նոր տեղադրվող պատուհանների տեսքը պետք է լինի համահունչ շենքի առկա պատուհանների հետ/ և դռների տեղադրում /նոր տեղադվող դռները պետք է լինեն համապատասխան և համահունչ տվյալ հատվածի նոր տեղադրված դռներին/:<br>• Նախատեսել սանհանգույցների վերանորոգում, ըստ անհրաժեշտության վերահատակագծում և համապատասխանեցում գործող նորմերին:<br>• Նախատեսել աստիճանավանդակների վերանորոգում, աստիճանավանդակներում նոր բազրիքների տեղադրում, սալիկներով երեսպատում (նյութի ընտրությունը համաձայնեցնել Պատվիրատուի հետ),<br>• Նախատեսել շենքի արդիական ներքին հարդարում՝ ժամանակակից լուծումներով և մոտեցումներով:<br>• Նախատեսել շենքի տարհանման պլան,<br>• Նախատեսել շենքի համալրում հենաշարժային համակարգի խախտումներ և հաշմանդամություն ունեցող անձանց մատչելի տեղաշարժն ապահովող անհրաժեշտ նախագծային լուծումներով և սարք-սարքավորումներով (թեքահարթակներ, առանձնացված սանհանգույցներ՝ համապատասխան ինվենտարով, բազրիքներ, լրացուցիչ լուսավորություն, ըստ անհրաժեշտության վերելակ կամ վերհան սարք)<br>• Լուսատուների ընտրության հարցում կիրառել էներգախնայող լուսատուներ:<br>• Պահանջվող բոլոր սարք սարքավորումների վերաբերյալ մասնագրերում ներառել մանրամասն տեխնիկական բնութագրեր:<br>• Նախագծման ընթացիկ աշխատանքները աշխատանքային կարգով համաձայնեցնել Պատվիրատուի հետ՝ միաժամանակ ապահովելով նորմատիվ պարտադիր պահանջները և օգտագործելով արդի մոտեցումներ: Ծագած բոլոր հարցերը քննարկել Պատվիրատուի հետ:<br>• Նախատեսել օդափոխության համակարգի վերականգնում, անհրաժեշտության դեպքում օդափոխության նոր համակարգի կազմակերպում:<br>• Նախատեսել կիսանկուղային հարկի ջրամեկուսացման միջոցառումներ /համաձայնեցնել Պատվիրատուի հետ/:<br>• Ըստ անհրաժեշտության նախատեսել մուտքի վերականգնում և աստիճանավանդակի վերանորոգում /ըստ անհրաժեշտության նորի կառուցում/, նոր բազալտե սալիկներով երեսպատում. թեքահարթակի կառուցում:<br>• Ներքին ծածկույթների համար տարբեր հարդարման նյութերի կիրառումը նպատակահարմար է բաշխել հետևյալ սկզբունքով. նախամուտքի, աստիճանավանդակների և միջանցքների մասում իրականացնել կերամոգրանիտե չսահող հատակներ, աշխատասենյակներում, դասասենյակներում, հանդերձարաններում և պարասրահներում՝ բարձրակարգ լամինատե հատակ և երանգին համապատասխան շրիշակներ, վինիլային, լինոլեումե հատակ կամ համարժեք այլ նյութ՝ համապատասխան սենքի նշանակության: Պատերի հարդարման համար օգտագործել բարձրորակ, լվացվող լատեքսային ներկ /երկտակ/՝ երանգը համաձայնեցնել Պատվիրատուի հետ: | | | | | | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | • Ըստ անհրաժեշտության նախատեսել հատակագծային փոփոխություններ՝ հաշվի առնելով շինության կոնստրուկտիվ սխեման:<br>• Լրացուցիչ նախագծային լուծումներ և փոփոխություններ՝ Պատվիրատուի հետ համաձայնեցնելով:<br>*** Նախագծի վերաբերյալ այլ մանրամասները և պահանջները կներկայացվեն պատվիրատուի կողմից նախագծի քննարկման ժամանակ:**<br>**Ծառայությունները մատուցվում են, համաձայն նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման ծառայությունների ներկայացվող պահանջների** | | | | | |

**Ծառայությունների մատուցումն իրականացվում է մեկ փուլով**

**ԱՂՅՈՒՍԱԿ N 1**

**ՆԱԽԱԳԾԱՆԱԽԱՀԱՇՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ**

| | |
|---|---|
| Նախագծման հիմնավորում և նորմատիվային պահանջներ | **Նախագծման համար հիմք հանդիսացող փաստաթղթեր՝**<br>- շենքերի և շինությունների, զբաղեցրած և օգտագործման համար հատկացված հողամասի սեփականության վկայական (կտրամադրվի պատվիրատուի կողմից),<br>- կատարված բոլոր ուսումնասիրությունների արդյունքների վերաբերյալ տրված եզրակացություններ (նախագծող կազմակերպության կողմից),<br>- նախագծային առաջադրանքի այլ մանրամասներ (կազմվում է ընտրված Նախագծողի և Պատվիրատուի համատեղ մասնակցությամբ և հաստատմամբ),<br>- չափագրություններ (նախագծող կազմակերպության կողմից),<br>- ոլորտային (շահագրգիռ) մարմինների եզրակացություններ, եթե այդպիսիք անհրաժեշտ են (նախագծող կազմակերպության կողմից),<br>- այլ անհրաժեշտ փաստաթղթեր:<br><br>**Նախագծի մշակում ըստ ՀՀ-ում գործող նորմատիվային պահանջների՝**<br><br>- ՀՀ կառավարության 19.03.2015թ. N 596-Ն որոշում «ՀՀ կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին»,<br>- «Բնակելի, հասարակական, արտադրական շենքերի և շինությունների նախագծային փաստաթղթերի կազմը և բովանդակությունը սահմանող կանոնների հաստատման մասին» ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի նախագահի 11.09.2017թ. N 128-Ն հրաման: |

| | |
|---|---|
| | - ՀՀ կառավարության 16.02.2006թ. N 392-Ն որոշում «Հաշմանդամների և բնակչության սակավաշարժուն խմբերի համար սոցիալական, տրանսպորտային և ինժեներական ենթակառուցվածքների մատչելիության ապահովման կարգը հաստատելու մասին»,<br>- ՀՀՇՆ 21-01-2014 «Շենքերի և շինությունների հրդեհային անվտանգություն» շինարարական նորմերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարի 2001 թվականի հոկտեմբերի 1-ի N 82 հրամանում փոփոխություն կատարելու մասին ՀՀ քաղաքաշինության նախարարի 17.03.2014թ. N 78-Ն հրաման,<br>- ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 22.05.2023 թվականի «ՀՀՇՆ 30-01-2023 «Քաղաքաշինություն. Քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարի 2014 թվականի հոկտեմբերի 14-ի N 263-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 04-Ն հրաման,<br>- ՀՀՇՆ 31-03-«Հասարակական շենքեր և շինություններ» ՀՀ շինարարական նորմերը հաստատելու և Հայաստանի հանրապետության քաղաքաշինության նախարարի 2001 թվականի հոկտեմբերի 1-ի N 82 հրամանում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 10.12.2020թ. N 95-Ն հրաման,<br>- ՀՀՇՆ IV-11.07.01-2006 (ՄՍՆ 3.02-05-2003) «Շենքերի և շինությունների մատչելիությունը բնակչության սակավաշարժուն խմբերի համար» շինարարական նորմերը հաստատելու մասին» ՀՀ քաղաքաշինության նախարարի 10.11.2006թ. N 253-Ն հրաման,<br>- ՀՀ քաղաքաշինության նախարարի 2004 թվականի օգոստոսի 4-ի «ՀՀՇՆ IV-12.02.01-04 «Ջեռուցում, օդափոխում և օդի լավորակում» շինարարական նորմերը հաստատելու մասին» N 83-Ն հրաման,<br>- ՀՀՇՆ 24-01-2016 «Շենքերի ջերմային պաշտպանություն» շինարարական նորմերը հաստատելու և Հայաստանի հանրապետության քաղաքաշինության նախարարի 2001 թվականի հոկտեմբերի 1-ի N 82 հրամանում լրացում կատարելու մասին ՀՀ քաղաքաշինության նախարարի 120-Ն հրաման,<br>- ՀՀՇՆ 22-03-2017 «Արհեստական և բնական լուսավորում» շինարարական նորմերը հաստատելու, Հայաստանի հանրապետության քաղաքաշինության նախարարի 2001 թվականի հոկտեմբերի 1-ի N 82 հրամանում փոփոխություն կատարելու և մի շարք հրամաններ ուժը կորցրած ճանաչելու մասին N 56-Ն հրաման,<br>- ՀՀՇՆ 40-01.02 «Ջրամատակարարում. արտաքին ցանցեր և կառուցվածքներ» Հայաստանի Հանրապետության շինարարական նորմերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարի 2001 թվականի հոկտեմբերի 1-ի N 82 հրամանում փոփոխություն կատարելու մասին ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 28.12.2020թ. N 103-Ն հրաման,<br>- ՀՀ քաղաքաշինության նախարարի 2014 թվականի մարտի 17-ի «ՀՀՇՆ 40-01.01-2014 «Շենքերի ներքին ջրամատակարարում և ջրահեռացում» շինարարական նորմերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարի 2001 թվականի հոկտեմբերի 1-ի N 82 հրամանում փոփոխություն կատարելու մասին» N 80-Ն հրաման,<br>- ՀՀՇՆ 52-01-2021 - «Բետոնե և երկաթբետոնե կոնստրուկցիաներ» Հայաստանի Հանրապետության շինարարական նորմերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարի 2001 թվականի հոկտեմբերի 1-ի N 82 հրամանում փոփոխություն կատարելու մասին ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի |

| | |
|---|---|
| | 14.01.2021թ. N 02-Ն հրաման,<br>- ՀՀՇՆ 53-01-«Պողպատե կոնստրուկցիաներ» շինարարական նորմերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարի 2001 թվականի հոկտեմբերի 1-ի N 82 հրամանում փոփոխություն կատարելու մասին ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 28.12.2020թ. N 104-Ն հրաման<br>- ՀՀՇՆ 20.04-«Երկրաշարժադիմացկուն շինարարություն. նախագծման նորմեր» շինարարական նորմերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարի 2006 թվականի փետրվարի 3-ի N 24-ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 28.12.2020թ N 102-Ն հրաման<br>- ՀՀ կառավարության 04.05.2017թ. «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության 10.02.2011թ N 168-Ն որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին» N 526-Ն որոշման Կարգի 33-րդ կետի 10-րդ ենթակետի պահանջներ,<br>- ՀՀ կառավարության 25.12.2014թ. N 1504-Ն որոշում «Պետական միջոցների հաշվին կառուցվող (վերակառուցվող, նորոգվող) օբյեկտներում էներգախնայողության և էներգաարդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումների կիրառման մասին»: |
| Նախագծման փուլերը | **Նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմը և բովանդակությունը սահմանող կանոնների ապահովում՝**<br>ՀՀ քաղաքաշինության նախարարի 11.09.2017թ. N128-Ն հրամանի համաձայն:<br>Նախագծային աշխատանքների իրականացում «Աշխատանքային Նախագիծ» 1 (մեկ) փուլով: |
| Նախագծի կազմը | **«ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՆԱԽԱԳԻԾ»**<br>**Նախագծի բոլոր բաժինները մշակել՝**<br>հաշվի առնելով առաջադրանքի բնույթը, շինարարական նորմերով և կանոններով սահմանված կարգով:<br><u>Նախագծի լրակազմում ընդգրկվող (մշակվող) փաստաթղթեր</u><br>- **Ելակետային տվյալների փաթեթ***<br>- **Ընդհանուր բացատրագիր /կարող է համատեղվել ելակետային նյութերում/***<br>- **Հողամասի հատակագծային կազմակերպման ուրվագիծ***<br>(կամ հողամասի գլխավոր հատակագիծ և իրավիճակային հատակագիծ),<br>- **Ճարտարապետաշինարարական մաս***<br>- Ծավալահատակագծային լուծումներ, ճակատներ, կտրվածքներ, դռների և պատուհանների ուրվագծեր, առաստաղների և հատակների արտացոլված հատակագծեր*<br>- Հաշմանդամների համար մատչելիության ապահովմանն ուղղված միջոցառումներ*<br>- Մասնագրեր և մանրամասն հանգույցներ<br>- Շինարարության կազմակերպման նախագիծ /փուլային իրականացմամբ/<br>- Շրջակա միջավայրի պահպանմանն ուղղված միջոցառումներ՝ նախագծի կազմում |

- **Կոնստրուկտիվ մաս**
- Կոնստրուկտիվ լուծումներ /ըստ անհրաժեշտության և առկայության/
- **Ինժեներական մաս**
- (ներքին և արտաքին) լուծումներ (գծագրական և տեքստային նյութեր՝ այդ թվում մասնագրեր, նախագիծ)
- էլեկտրամատակարարման /ներառյալ հողանցման համակարգ, եթե անհրաժեշտ է/, լուսավորություն /ինսոլյացիոն հաշվարկով հիմնավորված/, կոյուղու, ջրամատակարարման և ջրահեռացման, օդափոխության և օդորակման, կապի ցանցեր, տեսահսկում, անվտանգություն, հակահրդեհային ազդանշանում, հրդեհաշիջում և այլն:
- Էներգախնայողությանն և էներգաարդյունավետությանն ուղղված միջոցառումներ
- Հրդեհի բռնկման ժամանակ մարդկանց և արժեքավոր սարքավորումների տարահանման ուրվագծեր:
- Հակահրդեհային պաշտպանության տեխնիկական համակարգի ուրվագիծ:
- Համակարգերի սկզբունքային ուրվագծեր:
- Սարքավորումների, ռադիոէլեկտրոնային և այլ տեխնիկական միջոցների տեղադրման սկզբունքային ուրվագծեր:
- Ցանցերի հատակագծեր:
- Այլ ներքին և արտաքին լուծումներ, գծագրական և տեքստային նյութեր՝ այդ թվում մասնագրեր, միացման հանգույցների նկարագիր, տեխնիկական բնութագրեր և այլն:
- Ինժեներական մասերի հզորությունների հաշվարկների հաշվետվություն,
- Ծավալաթերթ-նախահաշվի կազմում /երկլեզու՝ հայերեն-ռուսերեն տարբերակներն առանձնացված/
- Այլ փաստաթղթեր, որոնք նախատեսված են ՀՀ օրենսդրությամբ, այդ թվում՝ քաղաքացիական պաշտպանության ու արտակարգ իրավիճակների կանխարգելման միջոցառումներ (ինժեներատեխնիկական անվտանգություն, ՀՀ օրենսդրությամբ նախատեսված այլ միջոցառումներ)
- Նախագծով նախատեսված նյութերի և սարքավորումների երաշիքային ժամկետների ցանկ:
- Ներկայացնել աշխատանքների առանձին տեսակների կատարման օրացուցային ժամանակացույց:

Նախագծի նախնական համաձայնեցում, Պատվիրատուի պահանջով փոփոխում:
Էսքիզային նախագծի նախնական համաձայնեցում, անհրաժեշտության դեպքում նաև, Պատվիրատուի պահանջով փոփոխում: Աստղանիշով (*) նշված տողերը համարվում են էսքիզային նախագծի մաս և ենթակա են համաձայնեցման առաջին փուլում: Էսքիզային նախագիծը կազմում է ընդհանուր ծառայության առնվազն 30 տոկոսը:

<u>Համաձայնեցնող մարմիններ</u>

<u>*Նախագծի համաձայնեցում*</u>

- ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության,
- ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի,
- Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն ՊՈԱԿ /ըստ անհրաժեշտության/,
- Այլ մարմիններ ըստ անհրաժեշտության,

| | |
|---|---|
| | - ՀՀ առողջապահության և աշխատանքի տեսչական մարմնի (ըստ անհրաժեշտության),<br>- Ըստ անհրաժեշտության (համայնքի ղեկավարի կողմից տրամադրվող ճարտարապետահատակագծային առաջադրանքի և տարածքի գլխավոր հատակագծով սահմանված պահանջների, տեխնիկատնտեսական հիմնավորման, ինչպես նաև հնարավոր ազդեցության ենթակա տարածքի շրջակա միջավայրի, բնական պայմանների, ռեսուրսների ու դրանց օգտագործման նկարագրի առկայությամբ)՝ ՀՀ շրջակա միջավայրի նախարարության հետ:<br><br>Համաձայնեցումների համար դիմում է, պատասխանները ստանում և ներկայացնում է Կատարողը: |
| Այլ պահանջներ | <u>Եզրակացություններ</u><br>Նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների համար հատկացված ֆինանսական միջոցների շրջանակներում՝<br>- Նախագծում կաթսայատներ նախատեսելու դեպքում՝ արտադրական վտանգավոր օբյեկտների նախագծային փաստաթղթերի տեխնիկական անվտանգության փորձաքննության եզրակացությունների ձեռքբերում,<br>- Նախագծում վերելակներ կամ վերհան սարքեր նախատեսելու դեպքում՝ արտադրական վտանգավոր օբյեկտների նախագծային փաստաթղթերի տեխնիկական անվտանգության փորձաքննության եզրակացությունների ձեռքբերում,<br>- Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման (ՇՄԱԳ) եզրակացության ձեռքբերում (դրա անհրաժեշտության դեպքում):<br><br>**Փորձաքննություններ**<br>- Պարզ փորձաքննության ձեռքբերում՝ Պատվիրատուի կողմից: Ընդ որում ծառայությունների դիմաց կատարողը վճարվում է պարզ փորձաքննությունը անցնելուց հետո:<br><br>**Նախագծի լրամշակում**<br>- Եթե Պատվիրատուի նախաձեռնությամբ իրականացվող քաղաքաշինական պարզ փորձաքննության արդյունքներով տրվել է եզրակացություն, որ Նախագիծը վերադարձվում է լրամշակման, ապա նախագծանախահաշվային փաստաթղթերի լրամշակումն իրականացվում է առանց ֆինանսական փոխհատուցման՝ Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում նախագծողի կողմից:<br>- Եթե Պատվիրատուի նախաձեռնությամբ իրականացվող համալիր փորձաքննության գործընթացի արդյունքներով տրվում է բացասական եզրակացություն կամ դրական եզրակացություն՝ պայմանով, որ անհրաժեշտ է կատարել որոշակի լրամշակում, ապա նախագծանախահաշվային փաստաթղթերի լրամշակումն իրականացվում է առանց ֆինանսական փոխհատուցման՝ Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում նախագծողի կողմից: |

**Շինարարական նյութերի, պատրաստվածքների, սարքերի, սարքավորումների (շահագործման) նկատմամբ պահանջներ.**

- նյութերի, պատրաստվածքների շահագործման առավելագույն ժամկետ,
- նորագույն տեխնոլոգիաների կիրառմամբ արտադրված նյութերի, պատրաստվածքների ցանկ,
- էներգաարդյունավետություն ապահովող միջոցառումների, սարքավորումների և նյութերի ցանկ,
- նախագծում օգտագործվող շինարարական նյութերի, պատրաստվածքների, սարքերի, սարքավորումների հատկանիշների մանրամասն և սպառիչ նկարագրում-բնութագրում՝ նախագծի մասնագրերում և նախահաշվում՝ նշելով տվյալ ապրանքը բնութագրող հիմնական և/կամ անձնագրային տեխնիկական ցուցանիշները:
- օգտագործվող ապրանքների նկարագրության ժամանակ հղումներ օգտագործելիս անհրաժեշտ է ներկայացնել նաև որպես համարժեք առաջարկվող ապրանքների ֆիրմային անվանումը, մոդելը և արտադրողը՝ միաժամանակ: Համարժեք առաջարկվող ապրանքներից առաջ անհրաժեշտ է գրել «կամ համարժեք» արտահայտությունը,
- օդափոխության և պոմպային սարքավորումներ նախատեսելու դեպքում՝ թույլատրելի շեղումների մասին տեղեկատվություն:
- օգտագործվելիք նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները:
- օգտագործվող նյութերը, պատրաստվածքները, սարքերը, սարքավորումները սահմանելիս նախապատվությունը տալ տեղական արտադրության և ՀՀ ներմուծվող շինանյութերին, սարքերին, սարքավորումներին,
- շինարարական աշխատանքների կատարման համար անհրաժեշտ լիցենզիաների / ներդիրների ցանկը:

**ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՆԱԽԱԳԾԻ ԼՐԱԿԱԶՄ**

Նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակում համակարգչային ծրագրով:

- Նախագծանախահաշվային փաստաթղթերի /տեքստային և գծագրական նյութերի, նախահաշվի/ ամբողջական փաթեթի ներկայացում 6 օրինակ՝ **երկլեզու /առանձին հայերեն 6 օրինակ և ռուսերեն՝ 2 օրինակ/:**

- Նախահաշվի և ծավալաթերթի /միավոր արժեքներով/ փաստաթղթերի ամբողջական փաթեթի ներկայացում՝ հայերեն 3 և ռուսերեն 1 օրինակ:

- Նախագծահաշվային երկլեզու փաստաթղթերի էլեկտրոնային փաթեթի ներկայացում՝ **6 օրինակ էլեկտրոնային կրիչով,** տեքստային և գծագրական նյութերը՝ AutoCAD և PDF ֆորմատներով, նախահաշիվը և ծավալաթերթը՝ EXCEL տարբերակներով:

- Նախնական նախագիծը անհրաժեշտ է ներկայացնել 2 օրինակով՝ հայերեն լեզվով, ինչպես նաև ներկայացնել դրա էլեկտրոնային տարբերակը:

**Էլեկտրոնային կրիչում ներառվող ֆայլերը պետք է ունենան պարունակությանը համարժեք անվանումներ և զերծ լինեն կողմնակի ինֆորմացիայից:**

Նախագծի իրականացման համար առաջարկվում է ներգրավել սահմանված կարգով արտոնագրված՝ ճարտարապետ

| | |
|---|---|
| | /բարձրագույն դասի Ա ենթադասի/, ճարտարագետ-կոնստրուկտոր /բարձրագույն դասի Ա ենթադասի/, սահմանված կարգով հավաստագրված էլեկտրաէներգետիկ ճարտարագետ նախագծող /1-ին կարգի/, ջերմագազա-մատակարարման և օդափոխության ճարտարագետ նախագծող /1-ին կարգի/, ջրամատակարարման և ջրահեռացման ճարտարագետ նախագծող /1-ին կարգի/, կապի համակարգերի ճարտարագետ նախագծող /1-ին կարգի/:<br><br>ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏ (ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆ)<br><br>Աշխատանքների կատարման ժամանակահատվածը նախատեսել հետևյալ ձևով. Պայմանագրի շրջանակներում համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 20 օրացուցային օրվա ընթացքում ներկայացնել նախնական էսքիզային նախագիծը համաձայնեցման համար: Մնացած ծառայությունների մատուցումը սկսել էսքիզային նախագիծը Պատվիրատուի կողմից հաստատելուց հետո և իրականացնել 25 օրացուցային օրվա ընթացքում: |

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

-------------------------------- Հ. Հակոբյան

(ստորագրություն)

Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

-------------------------------- Է. Հովսեփյան

(ստորագրություն)

Կ.Տ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ,
ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

«ԵՐԵՎԱՆԻ ՊԱՐԱՐՎԵՍՏԻ ՊԵՏԱԿԱՆ
ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ, НАУКИ,
КУЛЬТУРЫ И СПОРТА

ГНКО "ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ
ХОРЕОГРАФИЧЕСКИЙ КОЛЛЕДЖ"

**REPUBLIC OF ARMENIA MINISTRY OF EDUCATION, SIENCE, CULTURE AND SPORT**
**"YEREVAN DANCING ART STATE COLLEGE" NCSO**

Երևան, 0009, Բայրոնի փող. 5
Հեռ. (374 10) 56-44-26

5 Byron St., Yerevan, 0009
Tel.: (374 10) 56-44-26

Ереван, 0009, ул. Байрона,
Тел. (374 10) 56-44-2

Էլ.փոստ Էլ.փոստ՝(эл.почта) armballet@mail.ru

13.03 2025թ.

# ՏԵՂԵԿԱՆՔ

1. 25.02.2025թ. դրությամբ «Երևանի պարարվեստի պետական քոլեջ» ՊՈԱԿ ի աշակերտների և ուսանողների թիվը կազմում՝ 383

Որից 4-9-րդ դասարանների աշակերտներ-113

Ուսանողներ- 270

2. Քոլեջի աշխատողների թիվը կազմում է 123, որից 3-ը կաթսայատան աշխատողներ են /սեզոնային/, 4-ը ստուդիայի աշխատողներ / սեզոնային/:

Հիմնական աշխատողների թիվը կազմում է 117, որից 82-ը մանկավարժ և 35-ը վարչական անձնակազմ:

Տնօրեն՝ Դավիթ Գալստյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

# ՎԿԱՅԱԿԱՆ

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ
ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ

Կադաստրի
կոմիտե

Սույն վկայականով հաստատվում է 26 հունիսի 2020 թվականին գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական մատյանում կատարված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը հետևյալ տվյալներով.

## 1. ԳՐԱՆՑՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՒԲՅԵԿՏ(ՆԵՐ)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

## 2. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ԱՆՎԱՆՈՒՄԸ

Երևան, Կենտրոն Ջ. Բայրոնի փողոց 5 շենք տարածք

## 3. ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՑԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Համայնքի ղեկավարի որոշում 10/12/2019թ. N 4565-Ա

## 4. ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

Կադաստրային ծածկագիրը՝ 01-006-0414-0004, 01-006-0414-0019
Մակերեսի չափը (հա)՝ 0.39845, 0.0045
Նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի
Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ Հասարակական կառուցապատման
Գրանցված իրավունքի տեսակը՝ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺՆԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

**ՎԿԱՅԱԿԱՆ N 17022023-01-0293, գաղտնաբառ՝ GZA6CP3VKARY**

*Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգվել Կադաստրի կոմիտեի www.e-cadastre.am կայքէջի միջոցով*

## 5. ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

1) Նպատակային նշանակությունը՝ հասարակական

2) Բնութագրերը ըստ առանձին շինությունների՝

| Հ/Հ | Կադաստրային ծածկագիր | Տեսակ | Մակերես | Գրանցված իրավունքի տեսակ |
|---|---|---|---|---|
| 1 | 01-006-0414-0004-001 | Երաժշտական դպրոց պարարվեստի ուսումնարան | 8104.53 քմ | ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ |
| 2 | 01-006-0414-0004-002 | Կաթսայատուն | 18.3 քմ | ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ |
| 3 | 01-006-0414-0004-003 | Շինություն | 1.08 քմ | ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ |
| | | | | |
| | | | | |

## Լրացուցիչ նշումներ և տեղեկություններ

N 26062020-01-0133 վկայականում 17.02.2023թ կատարվել է ուղղում:
Սեփականատերը 0.0045 հա հողամասի նկատմամբ ունի համապատասխան բաժնային իրավունք:

Գրանցումը իրականացնող պաշտոնատար անձի անունը, ազգանունը՝ ԼՈՒՍԻՆԵ ՂԱԼԹԱԽՉՅԱՆ
Զբաղեցրած պաշտոնը՝ Անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանման անշարժ գույքի ավագ ռեգիստր

**ՎԿԱՅԱԿԱՆ N 17022023-01-0293, գաղտնաբառ՝ GZA6CP3VKARY**

*Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգվել Կադաստրի կոմիտեի www.e-cadastre.am կայքէջի միջոցով*

Կադաստրի կոմիտե

## ՇԻՆՈՒԹՅԱՆ ՀԱՏԱԿԱԳԻԾ

Հայաստանի Հանրապետություն

Հասցե Բայրոնի փողոց 5

Մարզ Երևան

Վարչ. շրջան Կենտրոն

Մասշտաբ 1:200



1.Կիսանկուղ
h=2.25-13.60
d=0.2-0.7
D=0.7

74 801453 Ա/Ձ Կարինե Համբարձումյան

ՇԻՆՈՒԹՅԱՆ ՀԱՏԱԿԱԳԻԾ

Հայաստանի Հանրապետություն

Հողհատկացման հիմքը

Հասցե Բայրոնի փողոց 5

Մարզ Երևան

Վարչ. շրջան Կենտրոն

Մասշտաբ 1 200




19.03.2020թ.

# ՇԻՆՈՒԹՅԱՆ ՀԱՏԱԿԱԳԻԾ

Հայաստանի Հանրապետություն

Հողհատկացման հիմքը

Հասցե Բայրոնի փողոց 5

Մարզ Երևան

Վարչ. շրջան Կենտրոն

Մասշտաբ 1:100




1.Նկուղ
h=2.60
d=0.7-1.0
D=0.7

Կատարող ____________ Կարինե Համբարձումյան 19-03-2020թ.

Որակավորման վկայականի համարը՝ 0322 տրման ամիս, ամսաթիվը «26» փետրվար 2014թ.

Իրավաբանական անձի 76.801453 Ա/Ձ Կարինե Համբարձումյան ____________

# ՇԻՆՈՒԹՅԱՆ ՀԱՏԱԿԱԳԻԾ

Հայաստանի Հանրապետություն

Հողհատկացման հիմքը

Հասցե Բայրոնի փողոց 5

Մարզ Երևան

Վարչ. շրջան Կենտրոն

Մասշտաբ 1:200



ՇԻՆՈՒԹՅԱՆ ՀԱՏԱԿԱԳԻԾ

Հայաստանի Հանրապետություն

Հասցե Բաղրամյան փողոց 5

Մարզ Երևան

Վարչ. շրջան Կենտրոն

Մասշտաբ 1:200



# ՇԻՆՈՒԹՅԱՆ ՀԱՏԱԿԱԳԻԾ

Հողհատկացման հիմքը

Հայաստանի Հանրապետություն

Անուն, ազգանուն (անվանում)

Հասցե Բայրոնի փողոց 5

Մարզ Երևան

Վարչ. շրջան Կենտրոն

Մասշտաբ 1:100







Կատարող ______________ Կարինե Համբարձու[illegible] 19-03-2020թ.

(ստորագրություն) (անուն, ազգանուն) [illegible]

Որակավորման վկայականի համարը՝ 0322 տրման ամիս, ամսաթիվը «26» փետրվար 2014թ.

Իրավաբանական անձի 76.801453 [illegible] Կարինե Համբարձումյան ______________ Կ. Տ.

(պետական հաշվառման համարը) [illegible] (ստորագրություն)

Հաստատված է
Հայաստանի Հանրապետության հանրային
ծառայությունները կարգավորող հանձնաժողովի
2013 թվականի հունիսի N176Ն որոշմամբ

# ԲՆԱԿԱՆ ԳԱԶԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ (ՄԱՏԱԿԱՐԱՐ - ԲԱԺԱՆՈՐԴ (ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ))

## ՊԱՅՄԱՆԱԳԻՐ № 015.04.14.9882

գ. Երևան «08» 04 2014 թվական
պայմանագրի կնքման վայրը

Մատակարարը՝ "Գազպրոմ Արմենիա" ՓԲԸ,
(կազմակերպության անվանումը, գտնվելու վայրը)
Երևանի ԳԳՄ [illegible] 141ա,
(մասնաճյուղի անվանումը, գտնվելու վայրը)
ի դեմս պետ. Գ. Մուրադյանի,
(պաշտոնը, անունը, ազգանունը)
որը գործում է ԳԳՄ կանոնադրության և լիազորագրի հիման վրա,
(գործունեությունը կարգավորող փաստաթղթի անվանումը)

մի կողմից, և Բաժանորդը՝ "Երևանի [illegible]
(կազմակերպության անվանումը, գազասպառման համակարգի
[illegible] ՊՈԱԿ
գտնվելու վայրը կամ անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը,
Բաղրամյան պող. N 5
գազասպառման համակարգի գտնվելու վայրը)
ի դեմս պետ. Ժ/պ. Ն. Մարտիրոսյանի,
(պաշտոնը, անունը, ազգանունը)
որը (ով) գործում է կանոնադրության հիման վրա,
(գործունեությունը կարգավորող փաստաթղթի անվանումը)

մյուս կողմից, համատեղ կոչվելով Կողմեր, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

### 1. ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Սույն պայմանագրում օգտագործվող հասկացություններն են.
   1) ***Հանձնաժողով***՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով.

2) ***ԳՄՕԿ***՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2005 թվականի հուլիսի 8-ի «Բնական գազի մատակարարման և օգտագործման կանոնները հաստատելու մասին» N95Ն որոշման 1-ին կետով հաստատված բնական գազի մատակարարման և օգտագործման կանոններ.

3) ***Հաշվարկային ամիս***՝ ժամանակահատված, որի գործողությունը սկսվում է օրացուցային ամսվա առաջին օրվա ժամը 11:00-ին և ավարտվում է հաջորդ օրացուցային ամսվա առաջին օրվա ժամը 11:00-ին:

4) ***10 հազար խորանարդ մետր և ավելի սպառում ունեցող Բաժանորդ***՝ անձ, որի ծախսած բնական գազի ամսական քանակությունը նախորդ օրացուցային տարում ավելի քան երկու հաշվարկային ամսում գերազանցել է 10 հազար խորանարդ մետրը (Ցելսիուսի 20 աստիճանի և 101.325կՊա կամ 1.033227կգ/սմ$^2$ ճնշման պայմաններում):

## 2. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

2. Մատակարարը պարտավորվում է Բաժանորդին մատակարարել բնական գազ, իսկ Բաժանորդը պարտավորվում է վճարել մատակարարված բնական գազի դիմաց:

## 3. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3. Մատակարարի և Բաժանորդի փոխհարաբերությունները կարգավորվում են սույն պայմանագրով, ԳՄՕԿ-ով, Հայաստանի Հանրապետության օրենքներով և այլ իրավական ակտերով:

4. Մատակարարը պարտավոր է.

1) սահմանազատման կետում ապահովել Բաժանորդի գազամատակարարումը «Բնական վառելանյութային գազեր արդյունաբերության և կոմունալ-կենցաղային նպատակների համար» ԳՕՍՏ 5542-87-ով սահմանված պայմաններին համապատասխանող

հոտավետացված ______ բնական գազով.
(հոտավետացված կամ չհոտավետացված)

2) 10 հազար խորանարդ մետր և ավելի սպառում ունեցող Բաժանորդին բնական գազ մատակարարել սույն պայմանագրով ամրագրված ժամանակացույցով և չափաքանակներով (Հավելված №3).

3) կազմել և Բաժանորդին ներկայացնել մատակարարված բնական գազի համար վճարման փաստաթղթերը՝ ԳՄՕԿ-ով և սույն պայմանագրով սահմանված կարգով.

4) չխոչընդոտել իր սեփականությունը հանդիսացող առևտրային հաշվառքի կայան Բաժանորդի կամ նրա ներկայացուցիչների մուտքը՝ օպերատիվ տեղեկատվություն ստանալու, կամ առևտրային հաշվառքի սարքերը կնքելու, կամ կնիքների առկայությունը ստուգելու, կամ բնական գազի որակական հատկանիշները ուսումնասիրելու նպատակով բնական գազի նմուշառման համար.

5) ԳՄՕԿ-ով սահմանված կարգով և ժամկետում սպառիչ պատասխան տալ Բաժանորդի դիմումին (բողոք, հարցադրում)՝ հանգամանորեն ներկայացնելով Բաժանորդի դիմումի առնչությամբ գործող իրավական դաշտը, նրա իրավունքներն ու պարտականությունները և այն բոլոր հանգամանքները, որոնք անհրաժեշտ կլինեն Բաժանորդին ամբողջական պատկերացում կազմելու ներկայացված դիմումի վերաբերյալ.

6) գազասպառման համակարգում վթարների և վթարային իրավիճակների դեպքերում Բաժանորդի կամ այլ անձանց ահազանգով դադարեցնել նրա գազամատակարարումը, վերսկսել այն դադարեցման պատճառների վերացումից հետո՝ ԳՄՕԿ-ով սահմանված կարգով և ժամկետներում տեղեկացնելով Բաժանորդին.

7) գազամատակարարման ընդհատման, սահմանափակման կամ դադարեցման դեպքում՝ բացառությամբ վթարների ու վթարային իրավիճակների Բաժանորդին նախապես տեղեկացնել և գազամատակարարումը վերականգնել ԳՄՕԿ-ով սահմանված կարգով և ժամկետներում.

8) սույն պայմանագրի լուծման կամ գազամատակարարման ժամանակավոր դադարեցման վերաբերյալ Բաժանորդի դիմումի հիման վրա դադարեցնել Բաժանորդի գազամատակարարումը հնարավորինս սեղմ ժամկետում, բայց ոչ ուշ, քան երկու աշխատանքային օրվա ընթացքում:

5. Բաժանորդը պարտավոր է.

1) վճարել մատակարարված բնական գազի դիմաց՝ սույն պայմանագրով և ԳՄՕԿ-ով սահմանված կարգով.

2) չօգտագործել բնական գազը կամ գազասպառման համակարգը տեխնիկական պայմաններով, նախագծով և գազասարքավորումների տեխնիկական փաստաթղթերով (անձնագրով) չնախատեսված նպատակներով ու պայմաններով.

3) գազասպառման համակարգի վթարի կամ վթարային իրավիճակների, կամ անսարքության, մարդկանց կյանքին, առողջությանը կամ շրջակա միջավայրին վտանգ սպառնացող իրավիճակներում, ինչպես նաև բնական գազի արտահոսք հայտնաբերելու դեպքում անմիջապես ընդհատել բնական գազի սպառումը և այդ մասին անհապաղ հայտնել Մատակարարին.

4) իր նախաձեռնությամբ գազասպառման համակարգում փոփոխություններ (այդ թվում՝ սարքավորումների, դրանց հզորության, սպառման ծավալների) կատարելու համար, ԳՄՕԿ-ով սահմանված կարգով դիմել Մատակարարին.

5) չխոչընդոտել Մատակարարի ներկայացուցիչների մուտքը իր գազասպառման համակարգի տեղակայման տարածք, եթե վերջինս ներկայացնում է իր լիազորությունները հավաստող ծառայողական վկայական՝ լուսանկարով և հայտնում է Բաժանորդի քարտի համարը:

Մատակարարի ներկայացուցչի մուտքը գազասպառման համակարգի տեղակայման տարածք իրականացվում է՝ շուրջօրյա ______.
(օրեր, ժամեր)

6) իր սեփականությունը հանդիսացող (իր կողմից օգտագործվող) գազասպառման համակարգի տեղակայման տարածքը օտարելու (օգտագործման իրավունքը դադարեցնելու) դեպքում դիմել Մատակարարին վերջնահաշվարկ կատարելու և պայմանագիրը լուծելու համար:

## 4. ՄԱՏԱԿԱՐԱՐՎԱԾ ԲՆԱԿԱՆ ԳԱԶԻ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ

6. Հաշվարկային ամսում Բաժանորդին մատակարարված բնական գազի քանակը որոշվում է սույն պայմանագրի N1 հավելվածում նշված առևտրային հաշվառքի սարքի միջոցով՝ ԳՄՕԿ-ով սահմանված կարգով և ժամկետներում: Բաժանորդն իրավունք ունի մասնակցել առևտրային հաշվառքի սարքի ցուցմունքի գրանցմանը:
7. 10 հազար խորանարդ մետր և ավելի սպառում ունեցող Բաժանորդի դեպքում Մատակարարի և Բաժանորդի պատասխանատու անձինք Հաշվարկային ամսվա համար ԳՄՕԿ-ով սահմանված կարգով և ժամկետներում կազմում են երկկողմ ակտ՝ Բաժանորդին մատակարարված բնական գազի քանակի մասին: Այն դեպքում, երբ Բաժանորդը (Բաժանորդի պատասխանատու անձը) ԳՄՕԿ-ով սահմանված կարգով չի մասնակցում սույն կետում նշված ակտի կազմմանը, ապա Մատակարարը կարող է ակտը կազմել միակողմանի: Մատակարարի կողմից կազմված ակտը հիմք է հանդիսանում Բաժանորդին վճարման փաստաթուղթ ներկայացնելու համար:
8. Առևտրային հաշվառքի սարքի՝ այդ թվում նոր առևտրային հաշվառքի սարքի, տվյալները գրանցվում են սույն պայմանագրի N1 հավելվածում:
9. Առևտրային հաշվառքի սարքի խախտման դեպքում բնական գազի քանակը վերահաշվարկվում է ԳՄՕԿ-ով սահմանված կարգով:
10. Հաշվարկային ամսում, երբ առևտրային հաշվառքի սարքն աշխատել է իր չափման ընդգրկույթից (Qmin-Qmax) դուրս, Բաժանորդին մատակարարված բնական գազի քանակությունը հաշվարկվում է՝
    1) եթե չափումը կատարվել է ընդգրկույթի ստորին սահմանից (Qmin) ցածր, ապա ծախսն ընդունվում է Qmin 100 տոկոսին հավասար,
    2) եթե չափումը կատարվել է ընդգրկույթի վերին սահմանից (Qmax) բարձր, ապա ծախսն ընդունվում է Qmax 120 տոկոսին հավասար:
    Ճնշման անկման սկզբունքով աշխատող հաշվառքի սարքերի դեպքում նվազագույն՝ Qmin և առավելագույն՝ Qmax մեծությունները որոշվում են հաշվարկային եղանակով՝ համաձայն ԳՕՍՏ 8.563-97-ի՝ «Հեղուկների և գազերի քանակության և ծախսի քանակության չափումը ճնշման փոփոխական անկման մեթոդով» և ԳՕՍՏ-8.586-2005-ի՝ «Հեղուկների և գազերի ծախսի ու քանակության չափումը ստանդարտ նեղացնող սարքերի միջոցով»: Այլ սկզբունքով աշխատող հաշվառքի սարքերի համար նվազագույն՝ Qmin և առավելագույն՝ Qmax մեծությունները որոշվում են հաշվառքի սարքի անձնագրային տվյալների հիման վրա՝ համաձայն համապատասխանության սերտիֆիկատի:

## 5. ԲՆԱԿԱՆ ԳԱԶԻ ՍԱԿԱԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ԿԱՐԳԸ

11. Մատակարարվող բնական գազի սակագինը սահմանում է Հանձնաժողովը:
12. Հանձնաժողովի կողմից բնական գազի սակագնի փոփոխման դեպքում սահմանված նոր սակագինն ուժի մեջ է մտնում Հանձնաժողովի սահմանած ժամկետում:
13. Հաշվարկային ամսում մատակարարված բնական գազի համար (10 հազար խորանարդ մետր և ավելի սպառում ունեցող Բաժանորդի դեպքում՝ սույն պայմանագրի 7-րդ կետին համապատասխան կազմված ակտի հիման վրա) Մատակարարը ԳՄՕԿ-ով սահմանված կարգով և ժամկետում Բաժանորդին ներկայացնում



է վճարման փաստաթուղթ: Հաշվարկային ամսում Բաժանորդին մատակարարված բնական գազի դիմաց վճարման ենթակա գումարը որոշվում է Հանձնաժողովի կողմից սահմանված համապատասխան սակագնի և մատակարարված բնական գազի քանակության արտադրյալով: Բաժանորդը մատակարարված բնական գազի դիմաց վճարումը կատարում է ներկայացված վճարման փաստաթղթի հիման վրա՝ ԳՄՕԿ-ով սահմանված կարգով և ժամկետում: Հաշվարկային ամսվա ընթացքում մատակարարվելիք բնական գազի համար կանխավճար կամ վճարման այլ երաշխիքներ պահանջելու դեպքերն ու կարգը սահմանվում է ԳՄՕԿ-ով:
14. Բոլոր դեպքերում, եթե Բաժանորդը Հաշվարկային ամսում սպառել է մինչև 10 հազար խորանարդ մետր բնական գազ, ապա Հաշվարկային ամսվա ընթացքում մատակարարված բնական գազի դիմաց վճարում է ամսական մինչև 10 հազար խորանարդ մետր սպառում ունեցող Բաժանորդներին վաճառվող յուրաքանչյուր հազար խորանարդ մետրի համար Հանձնաժողովի կողմից սահմանված սակագնով, իսկ եթե Բաժանորդը Հաշվարկային ամսում սպառել է 10 հազար խորանարդ մետր և ավելի բնական գազ, ապա Հաշվարկային ամսվա ընթացքում մատակարարված բնական գազի դիմաց վճարում է ամսական 10 հազար խորանարդ մետր և ավելի սպառում ունեցող Բաժանորդներին վաճառվող յուրաքանչյուր հազար խորանարդ մետրի համար Հանձնաժողովի կողմից սահմանված սակագնով:

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

15 Սույն պայմանագրով սահմանված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Կողմերը պատասխանատվություն են կրում Հայաստանի Հանրապետության օրենքներով, ԳՄՕԿ-ով և սույն պայմանագրով սահմանված կարգով:
16. Բաժանորդին մատակարարված բնական գազի քանակության դիմաց սույն պայմանագրի 13-րդ կետի համաձայն վճարման ժամկետը խախտելու դեպքում Մատակարարն իրավունք ունի պահանջել Բաժանորդից վճարելու տույժ՝ ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար չվճարված գումարի 0.1 տոկոսի չափով, բայց ոչ ավելի, քան չվճարված գումարի 10 տոկոսը:

## 7. ՖՈՐՍ ՄԱԺՈՐԱՅԻՆ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐ

17 Կողմերն ազատվում են պայմանագրային պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար պատասխանատվությունից, եթե դրանք հետևանք են արտակարգ և անկանխելի դեպքերի և հանգամանքների, որոնք ստեղծվել են Կողմերի կամքից անկախ, ներառյալ (սակայն չսահմանափակվելով դրանցով) բնական աղետները, բնության ուժերի արտասովոր ուժեղ դրսևորումները, ինչպես, օրինակ, ջրհեղեղները, երկրաշարժերը, փոթորիկները, պտտահողմերը, ինչպես նաև սաբոտաժային գործողությունները, պիաբեկչությունները, պատերազմները, ապստամբությունները, հասարակական անկարգությունները, գործադուլները, որոնք խոչընդոտում են Կողմերի գործունեությունը կամ հանգեցնում նրանց ստանձնած ցանկացած պարտավորության կատարման ձգձգման կամ դադարեցման՝ հակառակ նրանց կողմից գործադրված ջանքերի՝ խուսափելու, թուլացնելու կամ վերացնելու այդ ուժերի ազդեցությունը:

18. Կողմերը պարտավոր են սույն պայմանագրի 17-րդ կետում նշված իրավիճակների մասին հնարավորինս սեղմ ժամկետում, բայց ոչ ուշ, քան 24 ժամվա ընթացքում, տեղեկացնել միմյանց՝ նշելով դրանց վերացման հնարավոր ժամկետները:
19. Ֆորս մաժորի ավարտից հետո Կողմերը պարտավոր են անմիջապես ձեռնարկել միջոցներ իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելու համար:

## 8. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՈՒՄԸ

20. Սույն պայմանագրի առնչությամբ առաջացած վեճերը լուծվում են Կողմերի միջև բանակցությունների միջոցով, իսկ Կողմերից մեկի դիմելու դեպքում՝ Հանձնաժողովի միջնորդությամբ: Սույն կետը չի սահմանափակում Կողմերի իրավունքը՝ վեճերը լուծելու դատական կարգով:

## 9. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

21. Սույն պայմանագրի №2 և №3 հավելվածները տարածվում են 10 000 խորանարդ մետր և ավելի սպառում ունեցող Բաժանորդների վրա:
22. Սույն պայմանագրի №4 հավելվածը տարածվում է այն Բաժանորդների վրա, որոնց գազասպառման համակարգը տեղակայված է բազմաբնակարան շենքում:
23. Մատակարարը պարտավոր է Բաժանորդին ուղարկվող գրությունները, ծանուցումները և այլ փաստաթղթերը Բաժանորդին հանձնել պատշաճ ձևով: Փաստաթղթերը համարվում են պատշաճ ձևով հանձնված, եթե դրանք ուղարկվել են պատվիրված նամակով՝ հանձնման մասին ծանուցմամբ՝ Բաժանորդի կողմից սույն պայմանագրով նշված ծանուցման վայրին, կամ էլեկտրոնային փոստով, եթե առկա է այն ստանալու մասին էլեկտրոնային հավաստում կամ հանձնվել են ստացականով, եթե առանձին դեպքերի համար ԳՄՕԿ-ով կամ սույն պայմանագրով նախատեսված չէ պատշաճ հանձնման կոնկրետ ձև:
24. Բաժանորդը պարտավոր է սույն պայմանագրում նշված ծանուցման վայրի փոփոխության դեպքում 10 աշխատանքային օրվա ընթացքում Մատակարարին գրավոր տեղեկացնել նոր ծանուցման վայրի վերաբերյալ:
25. Այն դեպքում, երբ Բաժանորդը գրավոր չի տեղեկացրել Մատակարարին իր ծանուցման վայրի փոփոխության մասին, և Մատակարարը կիրառել է փաստաթղթերի պատշաճ հանձնման բոլոր ձևերը, սակայն առկա չէ Բաժանորդի կողմից համապատասխան փաստաթղթերն ստացած լինելու հավաստումը, ապա Մատակարարի կողմից սույն պայմանագրում նշված ծանուցման վայրով ուղարկված փաստաթուղթը համարվում է պատշաճ ձևով հանձնված, թեկուզ և Բաժանորդն այլևս այդ գտնվելու կամ բնակության վայրում չի գտնվում:
26. Մատակարարը և 10 000 խորանարդ մետր և ավելի սպառում ունեցող Բաժանորդը, ելնելով Բաժանորդի գազասպառման համակարգի առանձնահատկություններից, իրավունք ունեն սույն պայմանագրի N3 հավելվածում սահմանել լրացուցիչ պայմաններ:

## 10. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԼՈՒԾՈՒՄԸ

27. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կնքման պահից և գործում է անորոշ ժամկետով:



28. Մատակարարի և էներգետիկայի բնագավառում լիցենզավորված անձանց (որոնք բնական գազը ձեռք են բերում էլեկտրական կամ ջերմային էներգիա արտադրելու նպատակով) միջև կնքված պայմանագրերն ուժի մեջ է մտնում Հանձնաժողովում գրանցվելու պահից:
29. Հանձնաժողովի կողմից բնական գազի մատակարարման (Մատակարար-Բաժանորդ (կազմակերպություն)) պայմանագրի նոր օրինակելի ձև հաստատելու կամ գործող օրինակելի ձևում փոփոխություններ կամ լրացումներ կատարելու դեպքում Կողմերը պարտավոր են Հանձնաժողովի սահմանած ժամկետում կնքել նոր պայմանագիր կամ համապատասխան փոփոխություններ կամ լրացումներ կատարել գործող պայմանագրում:
30. Սույն պայմանագիրը կարող է լուծվել.
    1) Կողմերի փոխհամաձայնությամբ,
    2) Բաժանորդի կողմից միակողմանի, այդ մասին Մատակարարին տեղեկացնելու և օգտագործած բնական գազի, իսկ բազմաբնակարան շենքում գտնվող Բաժանորդի դեպքում՝ նաև տեխնիկական սպասարկման մատուցված ծառայության համար ամբողջությամբ վճարելու պայմանով,
    3) Մատակարարի կողմից միակողմանի՝ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված դեպքերում և կարգով:
31. Բաժանորդի կողմից սույն պայմանագրի 5-րդ կետի 6-րդ ենթակետով նախատեսված պարտավորությունը չկատարելու դեպքում սույն պայմանագիրը լուծված է համարվում այն պահից, երբ Մատակարարը պայմանագրի լուծման մասին ծանուցում է Բաժանորդին:

## 11. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՆԲԱԺԱՆԵԼԻ ՄԱՍ ԿԱԶՄՈՂ ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐԻ ՑԱՆԿԸ

32. Հավելված №1 – Համաձայնագիր սահմանազատման և առաքման կետերի մասին
33. Հավելված №2 – Համաձայնագիր սահմանազատման կետում բնական գազի որակի և ճնշման մասին
34. Հավելված №3 – Համաձայնագիր բնական գազի մատակարարման չափաքանակների և լրացուցիչ պայմանների մասին
35. Հավելված №4 – Համաձայնագիր բազմաբնակարան շենքում գտնվող գազասպառման համակարգի տեխնիկական սպասարկման ծառայությունների մատուցման մասին

**Մատակարար՝**

(կազմակերպության անվանումը)

(անունը, ազգանունը, պաշտոնը)

(ստորագրությունը)

**Բաժանորդ՝**

(կազմակերպության անվանումը կամ անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը)

(անունը, ազգանունը, պաշտոնը)

(ստորագրությունը)

Չարենցի 141ա
(գտնվելու վայրը)

Բաղրամյան փող. N 5
(գտնվելու վայրը)

558820, 570307
(հեռախոսահամարը)

Ն2ԱՔ

010564426, 091551901
(հեռախոսահամարը)

2470100794540010
(բանկի անվանումը և հաշվեհամարը)

220009190061000 ԱԿԲԱ
(բանկի անվանումը և հաշվեհամարը)

(էլեկտրոնային փոստի հասցեն)

(էլեկտրոնային փոստի հասցեն՝ առկայության դեպքում)

00046...
(հարկ վճարողի հաշվառման համարը)

01505765
(հարկ վճարողի հաշվառման համարը)

Բաղրամյան 5
(ծանուցման վայրը)

Կ.Տ. (առկայության դեպքում)

Կ.Տ. (առկայության դեպքում)

Հավելված №1
Բնական գազի մատակարարման
(Մատակարար-Բաժանորդ (կազմակերպություն))
2013 թվականի հունիսի 5-ի N176Ն որոշմամբ
հաստատված պայմանագրի

## ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

### Սահմանազատման և առաքման կետերի մասին

1. Բնական գազի առաքման կետ է համարվում՝ [illegible]

2. Բնական գազի սահմանազատման կետ է համարվում՝ [illegible]

**Առևտրային հաշվառքի սարքի (կայանի) տվյալները՝**

| № | Անվանումը | Մակնիշը | Գործարանային № | Տեղադրման վայրը | Տեղադրման ժամանակը |
|---|---|---|---|---|---|
| 1. | [illegible] | G-65 | 65045063 | Բաղրամյան 5 | |
| 2. | | | | | |
| 3. | | | | | |
| 4. | | | | | |



3. Առևտրային հաշվառքի սարքը (կայանը) հանդիսանում է [illegible] սեփականությունը:
4. Առևտրային հաշվառքի սարքի (կայանի) տեղակայման, փոխարինման և շահագործման (ներառյալ՝ սպասարկման, հերթական ստուգաչափման և նորոգման) ծախսերը՝ անկախ դրա պատկանելիությունից, կրում է Մատակարարը: Առևտրային հաշվառքի սարքի (կայանի) արտահերթ ստուգաչափման և նորոգման ծախսերն իրականացվում են ԳՄՕԿ-ով սահմանված կարգով:

**Չսկիչ հաշվառքի սարքի (կայանի) տվյալները**

| № | Անվանումը | Մակնիշը | Գործարանային № | Տեղադրման վայրը | Տեղադրման ժամանակը |
|---|---|---|---|---|---|
| 1. | | | | | |
| 2. | | | | | |
| 3. | | | | | |
| 4. | | | | | |

5. Չսկիչ հաշվառքի սարքը (կայանը) սպասարկում է դրա սեփականատերը:

**Մատակարար՝**

[illegible]
(անունը, ազգանունը, պաշտոնը)

(ստորագրությունը)

«8» 04 2014 թվական

Կ.Տ. (առկայության դեպքում)

**Բաժանորդ՝**

[illegible]
(անունը, ազգանունը, պաշտոնը)

(ստորագրությունը)

«8» 04 2014 թվական

Կ.Տ. (առկայության դեպքում)

*Հավելված №2*
*Հայաստանի Հանրապետության հանրային*
*ծառայությունները կարգավորող հանձնաժողովի*
*2017 թվականի մայիսի 31-ի N218Ն որոշման*

## ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ

ք. Երևան ______ 20 թվական
(կնքման վայրը)

Մատակարարը՝ "Հայաստանի էլեկտրական ցանցեր" ՓԲԸ
"Կենտրոն" ՏՀ տնօրինություն
(կազմակերպության անվանումը, գտնվելու վայրը)

ի դեմս [illegible]
(անունը, ազգանունը, պաշտոնը, լիազորված լինելու դեպքում լիազորագրի տվյալները)

որը գործում է լիազորագրի հիման վրա, մի կողմից,
(գործունեությունը կարգավորող փաստաթղթի անվանումը)

և Սպառողը՝ [illegible]
(անունը, ազգանունը, անձը հաստատող փաստաթղթի տվյալները, իրավաբանական անձի դեպքում՝ անվանումը, ներկայացուցչի անունը, ազգանունը, պաշտոնը, լիազորված լինելու դեպքում լիազորագրի տվյալները)

մյուս կողմից, համատեղ կոչվելով Կողմեր, ղեկավարվելով «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, Հայաստանի Հանրապետության այլ օրենքներով, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) հաստատած՝ Էլեկտրական էներգիայի մատակարարման և օգտագործման կանոններով (այսուհետ՝ ԷՄՕԿ), սույն պայմանագրով և այլ իրավական ակտերով, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1. Սույն պայմանագրի համաձայն Մատակարարը պարտավոր է Սպառողին մատակարարել էլեկտրական էներգիա, իսկ Սպառողը՝ վճարել մատակարարված էլեկտրական էներգիայի դիմաց:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2. Կողմերը ղեկավարվում են «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, Հայաստանի Հանրապետության այլ օրենքներով, ԷՄՕԿ-ով, սույն պայմանագրով և այլ իրավական ակտերով:

3. **Մատակարարը պարտավոր է՝**

1) ______________________________ հասցեում Սպառողին մատակարարել Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտերով սահմանված որակի էլեկտրական էներգիա՝ համաձայն սույն պայմանագրի №1 հավելվածով սահմանված էներգիա՝ համաձայն սույն պայմանագրի №1 հավելվածով սահմանված տեխնիկական պայմանների և (կամ) №2 հավելվածով սահմանված էլեկտրամատակարարման միագիծ սխեմայի:

2) ԷՄՕԿ-ով սահմանված ժամկետում հանրապետական սփռման առնվազն մեկ հեռուստաընկերության միջոցով հայտարարել նախորդ ամսվա ընթացքում Սպառողի կողմից սպառված էլեկտրական էներգիայի քանակի և արժեքի մասին սույն կետի 3-րդ ենթակետով նախատեսված սպասարկման կետերում տեղեկատվությունը հասանելի դարձնելու օրը.

3) նախորդ ամսվա ընթացքում Սպառողի սպառած էլեկտրական էներգիայի քանակի և արժեքի մասին տեղեկատվությունը տեղադրել իր հետ պայմանագիր կնքած Հայաստանի Հանրապետությունում գործող բանկերի վճարահաշվարկային կազմակերպությունների, փոստային բաժանմունքների սպասարկման կետերում՝ ԷՄՕԿ-ով սահմանված ժամկետում և կարգով.

4) ապահովել առևտրային հաշվառքի սարքի վրա Սպառողի կողմից դրված կնիքի ամբողջականությունը.

5) Սպառողի դիմումի հիման վրա ԷՄՕԿ-ով սահմանված ժամկետում և կարգով ստուգել Սպառողի առևտրային հաշվառքի սարքի ճշտությունը և Սպառողին ներկայացնել եզրակացություն.



6) իր միջոցների հաշվին կատարել առևտրային հաշվառքի սարքի աշխատանքի ճշտության ստուգման հետ կապված բոլոր ծախսերը, բացառությամբ ԷՄՕԿ-ով նախատեսված դեպքերի.

7) ԷՄՕԿ-ով սահմանված դեպքերում և ժամկետում ստուգել և ճշգրտել էլեկտրոնային առևտրային հաշվիչի ժամերը, այնպես, որ դրանք ճշգրիտ հաշվառեն Հանձնաժողովի կողմից սահմանված՝ գիշերային և ցերեկային ժամերին սպառված էլեկտրաէներգիայի քանակությունները.

8) առևտրային հաշվառքի սարքի աշխատանքի ճշտության ստուգում իրականացնելու դեպքում այդ մասին ԷՄՕԿ-ով սահմանված կարգով և ժամկետում զգուշացնել Սպառողին՝ համաձայնեցնելով ստուգման ժամկետները.

9) Սպառողի դիմումի հիման վրա կամ իր նախաձեռնությամբ ԷՄՕԿ-ով սահմանված դեպքերում և կարգով փոխարինել Սպառողի առևտրային հաշվառքի սարքը և համապատասխան փոփոխություն կատարել սույն պայմանագրում.

10) շուրջօրյա գործող 080000180 կամ 180 հեռախոսահամարով Սպառողի դիմելու դեպքում Սպառողին տրամադրել տեղեկատվություն կամ պարզաբանում վերջինիս հարցադրումների՝ ներառյալ էլեկտրամատակարարման ընդհատումների, դադարեցումների պատճառների և վերականգնման ժամկետների, սպառած էլեկտրական էներգիայի արժեքի և քանակության, վճարման ժամկետների, Մատակարարի և Սպառողի իրավունքների ու պարտականությունների և այլնի վերաբերյալ.

11) ԷՄՕԿ-ով սահմանված ժամկետում սպառիչ կերպով պատասխանել Սպառողի բանավոր դիմումին՝ բանավոր, գրավոր դիմումին՝ գրավոր, իսկ էլեկտրոնային փոստով ստացված դիմումին՝ էլեկտրոնային փոստի միջոցով.

12) Սպառողին տեղեկացնել էլեկտրամատակարարման պլանային և արտապլանային ընդհատումների ու վերականգնման ժամկետների մասին՝ ԷՄՕԿ ով սահմանված ժամկետում և կարգով.

13) Սպառողի դիմումի հիման վրա առևտրային (վերստուգիչ) հաշվիչի էլեկտրական էներգիայի հաշվառման և վերահսկման ավտոմատացված համակարգում վերջինիս համար բացել անձնական էջ և տրամադրել մուտքի անուն և գաղտնաբառ.

4. **Մատակարարն իրավունք ունի՝**

1) Սպառողից պահանջել վճարելու սպառած էլեկտրական էներգիայի դիմաց սույն պայմանագրով, ԷՄՕԿ-ով սահմանված կարգով և ժամկետում.

2) Սպառողից պահանջել մատակարարված էլեկտրական էներգիան օգտագործել սույն պայմանագրի 5-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված նշանակությամբ:

5. **Սպառողը պարտավոր է**

1) վճարել նախորդ ամսվա ընթացքում սպառած էլեկտրական էներգիայի արժեքը իր կողմից սպառված էլեկտրական էներգիայի քանակի և արժեքի մասին տեղեկատվությունը սույն պայմանագրի 3-րդ կետի 3-րդ ենթակետով սահմանված ժամկետում հասանելի դառնալուց հետո՝ ԷՄՕԿ-ով սահմանված ժամկետում.

2) մատակարարվող էլեկտրական էներգիան օգտագործել ոչ կենցաղային նշանակությամբ.

3) ապահովել իր սպառման համակարգում գտնվող էլեկտրատեղակայանքների պահպանման, սպասարկման և շահագործման անվտանգությունը.

4) չխախտել Մատակարարի սեփականությունը հանդիսացող առևտրային հաշվառքի սարքի, դրա կնիքների և տեղակայման արկղի ամբողջականությունը, խախտումներ հայտնաբերելու դեպքում անհապաղ հայտնել Մատակարարին

5) իր սեփականությունը հանդիսացող էլեկտրամատակարարվող տարածքը վաճառելու կամ այլ կերպ օտարելու դեպքում դիմել Մատակարարին՝ վերջնահաշվարկ կատարելու, էլեկտրամատակարարումը դադարեցնելու և պայմանագիրը լուծելու համար, ինչի վերաբերյալ Մատակարարը տեղեկանք է տալիս Սպառողին:

6. **Սպառողն իրավունք ունի՝**

1) կնքել առևտրային հաշվառքի սարքը, դիմել Մատակարարին առևտրային հաշվառքի սարքի ճշտությունը ստուգելու համար, մասնակցել դրա աշխատանքի ճշտության ստուգման հետ կապված բոլոր աշխատանքներին, այդ թվում նաև՝ ստուգաչափմանը, ԷՄՕԿ-ով սահմանված կարգով առևտրային հաշվառքի սարքի ճշտության ստուգումը պատվիրել նման իրավասություն ունեցող այլ կազմակերպությունների.

2) դիմել Մատակարարին իր առևտրային հաշվառքի սարքը փոխարինելու համար.

3) դիմել Մատակարարին՝ մասնակցելու առևտրային (վերստուգիչ) հաշվառքի սարքի ցուցմունքի գրանցմանը՝ ԷՄՕԿ-ով սահմանված կարգով:



## 3. ՄԱՏԱԿԱՐԱՐՎԱԾ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ՔԱՆԱԿԻ ԵՎ ԱՐԺԵՔԻ ՀԱՇՎԱՐԿԸ, ԴՐԱ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

7. Սպառված էլեկտրական էներգիայի քանակությունը, բացառությամբ սույն պայմանագրի 8-րդ կետով նախատեսված դեպքի, որոշվում է հաշվարկային ամսում Սպառողի առևտրային հաշվառքի սարքի (N3 հավելված) գրանցած ցուցմունքների տարբերությամբ կամ այդ տարբերությունը չափիչ տրանսֆորմատորների տրանսֆորմացիայի գործակիցների արտադրյալով բազմապատկելու միջոցով:

8. Եթե առևտրային հաշվառքի սարքն անմիջապես գրանցում է հաշվարկային ժամանակահատվածում ծախսված էլեկտրական էներգիայի քանակը, ապա որպես հաշվարկային ամսվա ընթացքում սպառված՝ ընդունվում է էլեկտրական էներգիայի այդ քանակը:

9. Առևտրային հաշվառքի սարքի ցուցմունքը գրանցում է Մատակարարը՝ ԷՄՕԿ-ով սահմանված կարգով և ժամկետում:

10. Առևտրային հաշվառքի սարքի խախտման (էլեկտրական էներգիայի քանակության սխալ գրանցման) դեպքում սպառված էլեկտրական էներգիայի քանակությունը որոշվում է հաշվարկային եղանակով՝ համաձայն ԷՄՕԿ-ի պահանջների:

11. Հաշվարկային ամսվա ընթացքում սպառողի սպառած էլեկտրական էներգիայի արժեքը որոշվում է Հանձնաժողովի կողմից սահմանված սակագների և սպառված էլեկտրական էներգիայի քանակության արտադրյալով: Հանձնաժողովի կողմից էլեկտրական էներգիայի սակագնի փոփոխման դեպքում նոր սակագինը ուժի մեջ է մտնում Հանձնաժողովի սահմանած ժամկետից:

12. Սպառողը նախորդ ամսվա ընթացքում սպառված էլեկտրական էներգիայի արժեքը վճարում է իր կողմից սպառված էլեկտրական էներգիայի քանակի և արժեքի մասին Մատակարարի կողմից սույն պայմանագրի 3-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն տեղեկատվությունը տեղադրվելուց հետո՝ ԷՄՕԿ-ով սահմանված ժամկետում:

13. Հաշվարկային փաստաթղթում սխալ հայտնաբերելու դեպքում սխալը հայտնաբերած կողմը փաստի մասին տեղեկացնում է մյուս կողմին: Անհամաձայնության դեպքում կողմը ԷՄՕԿ-ով սահմանված ժամկետում մյուս կողմին գրավոր ներկայացնում է իր պարզաբանումները՝ համապատասխան հիմնավորումներով: Հաշվարկային փաստաթղթում սխալի փաստը հաստատվելու դեպքում Մատակարարը ուղղումը հաշվի է առնում հաջորդ ամսվա համար ներկայացվող հաշվարկային փաստաթղթում:

14. Սույն պայմանագրի համաձայն Մատակարարի հանդեպ Սպառողի դրամական պարտավորությունների առկայության դեպքում սպառողի վճարումներն առաջնահերթ ուղղվում են հիմնական պարտավորության մարմանը՝ ըստ դրա վճարման համար սահմանված ժամկետի վաղեմության, հետո միայն հաշվարկված տույժի մարմանը:

15. Մատակարարի հանդեպ դրամական պարտավորությունների բացակայության դեպքում Սպառողի վճարումները որպես կանխավճար ուղղվում են ապագայում առաջացող պարտավորությունների կատարմանը՝ համաձայն սույն պայմանագրի 14-րդ կետի:

## 4. ԷԼԵԿՏՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԸՆԴՀԱՏՈՒՄԸ ԿԱՄ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ

16. Էլեկտրամատակարարման պլանային և արտապլանային ընդհատումների տարեկան կտրվածքով առավելագույն գումարային տևողությունը սահմանվում է ԷՄՕԿ-ով: Եթե սպառողի (բացառությամբ բնակչության) էլեկտրամատակարարման սխեման ապահովում է էլեկտրամատակարարման վերականգնման ավելի կարճ ժամանակահատված, քան սահմանված է ԷՄՕԿ-ով, ապա մատակարարը և սպառողը պարտավոր են սույն պայմանագրի N6 հավելվածում սահմանել այդ ժամանակահատվածը:

17. Էլեկտրամատակարարման պլանային և արտապլանային ընդհատումների ու վերականգնման ժամկետների մասին Մատակարարը տեղեկացնում է ԷՄՕԿ-ով սահմանված կարգով և ժամկետներում:

18. Չի թույլատրվում այն սպառողների էլեկտրամատակարարման պլանային ընդհատում, որոնց էլեկտրամատակարարումը նախատեսված է իրականացնել 6 կՎ և բարձր լարման երկու և ավելի անկախ սնուցում ունեցող օդային (մալուխային) գծերով կամ կայանի (ենթակայանի) երկու հոծանային համակարգերից կամ սեկցիաներից: Մյուս բոլոր դեպքերում Մատակարարը Սպառողի էլեկտրամատակարարման պլանային ընդհատումը պետք է իրականացնի աշխատանքային օրերին՝ ԷՄՕԿ-ով սահմանված ժամանակահատվածում:

19. Սպառողը (բացառությամբ բնակչության) և Մատակարարը, փոխհամաձայնեցված կարգով իրավունք ունեն սույն պայմանագրի N6 հավելվածում ամրագրել՝

1) ԷՄՕԿ-ով սահմանված ժամկետներից տարբերվող էլեկտրամատակարարման պլանային ընդհատումների այլ ժամկետներ (օր կամ ժամեր), եթե դա չի հանգեցնում բնակչության կամ այլ սպառողների համար ԷՄՕԿ-ով սահմանված էլեկտրամատակարարման պլանային ընդհատումների ժամկետների խախտման.

2) էլեկտրամատակարարման պլանային ընդհատումների և վերականգնման ժամկետների մասին տեղեկացման այլ կարգ և ժամկետներ:

20. Մատակարարն իրավունք ունի դադարեցնել Սպառողի էլեկտրամատակարարումը՝

1) սպառված էլեկտրական էներգիայի դիմաց սույն պայմանագրով սահմանված ժամկետներում և կարգով վճարում չկատարելու դեպքում.

2) եթե Մատակարարին թույլ չի տրվել Սպառողի հետ համաձայնեցված ժամանակացույցով սպասարկել էլեկտրամատակարարվող տարածքում տեղակայված էլեկտրատեղակայանքները, այդ թվում՝ էլեկտրական էներգիայի հաշվառքի սարքերը՝ անկախ դրանց պատկանելությունից.

3) եթե Սպառողը էլեկտրական էներգիան սպառել է առևտրային հաշվառքի սարքի միտումնավոր խախտումով կամ առևտրային հաշվառքի սարքի շրջանցումով.

4) էլեկտրական ցանցին ժամանակավոր միացման տեխնիկական պայմանների համաձայն՝ էլեկտրական ցանցին ժամանակավոր միացման համար սահմանված ժամկետի ավարտի դեպքում.

5) Սույն պայմանագրի 3-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված հասցեում գտնվող սպառման համակարգից դուրս էլեկտրական էներգիան սպառելու դեպքում.

6) Էլեկտրական էներգիան սույն պայմանագրի 5-րդ կետի 2-րդ ենթակետում նշված նշանակությամբ չօգտագործելու դեպքում:

21. Մատակարարը պարտավոր է դադարեցնել Սպառողի էլեկտրամատակարարումը՝

1) Սպառողի գրավոր դիմումի համաձայն՝ վերջինիս նշած ժամկետում.

2) Էլեկտրամատակարարվող տարածքի (շենքի, շինության) նկատմամբ իրավունք ունեցող անձի գրավոր պահանջի և առաջարկվող ժամկետի ներկայացման դեպքում, եթե Սպառողը չունի տարածքի (շենքի, շինության) նկատմամբ իր իրավունքները կամ իրավունքների ձեռքբերումը հավաստող (հաստատող) փաստաթուղթ՝ բացառությամբ ԷՄՕԿ-ով սահմանված դեպքերի.

3) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ դեպքերում:

22. Էլեկտրամատակարարման սահմանափակումները և վերականգնումն իրականացվում են ԷՄՕԿ-ով և Հանձնաժողովի կողմից սահմանված այլ իրավական ակտերի համաձայն:

23. Պայմանագրում ամրագրված վթարային կամ տեխնոլոգիական հզորություն ունեցող սպառողի կողմից սահմանված ժամկետում վճարում չկատարելու դեպքում վերջինիս էլեկտրական էներգիայի մատակարարման սահմանափակումն ու դադարեցումն իրականացվում են ԷՄՕԿ-ով և սույն պայմանագրի N6 հավելվածով սահմանված կարգով և ժամկետներում:

## 5. ԼՐԱՑՈՒՑԻՉ ՊԱՅՄԱՆՆԵՐ

24. Սպառողի էլեկտրամատակարարման նպատակով օգտագործվող էլեկտրարտեղակայանքների և առևտրային հաշվառքի սարքերի ձեռքբերման, տեղակայման, փոխարինման և շահագործման ծախսերն իրականացվում է ԷՄՕԿ-ով սահմանված կարգով:

25. Սպառողի կողմից առևտրային հաշվառքի սարքը կնքելու դեպքում, այդ մասին սույն պայմանագրի N3 հավելվածում կատարվում է համապատասխան գրառում:

26. Սպառողի կողմից (բացառությամբ բնակչության) վերստուգիչ հաշվառքի սարք (հաշվիչ) տեղադրելու դեպքում դրա վերաբերյալ տվյալները նշվում են սույն պայմանագրի N3 հավելվածում:

27. Մատակարարն իրավունք ունի Սպառողի կողմից վճարման համար սահմանված ժամկետի խախտման դեպքում ԷՄՕԿ-ով սահմանված կարգով Սպառողից պահանջել կանխավճար կամ իր համար ընդունելի վճարման այլ երաշխիքներ:

28. Էլեկտրական ցանցին ժամանակավոր միացման ԷՄՕԿ-ով սահմանված դեպքերում Սպառողի սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացվում է Մատակարարից ժամանակավոր միացման տեխնիկական պայմաններ (հավելված №1) ստանալու միջոցով՝ ԷՄՕԿ-ով սահմանված կարգով:

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

29. Սույն պայմանագրով սահմանված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Կողմերը պատասխանատվություն են կրում Հայաստանի Հանրապետության օրենքներով, ԷՄՕԿ-ով և սույն պայմանագրով սահմանված կարգով:

30. Եթե Սպառողի էլեկտրամատակարարումը իրականացվել է սպասարկման որակի սահմանված պահանջների խախտմամբ, ապա Մատակարարը պարտավոր է ԷՄՕԿ-ով սահմանված կարգով Սպառողին վճարել տույժ:

31. Սպառողի (բացառությամբ բնակչության) կողմից սույն պայմանագրի 5-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն վճարման ժամկետը խախտելու դեպքում Մատակարարն իրավունք ունի Սպառողից պահանջել վճարելու տույժ՝ ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար չվճարված գումարի 0.1 տոկոսի չափով, բայց ոչ ավելի, քան չվճարված գումարի 10 տոկոսը:

32. Առևտրային հաշվառքի սարքի շրջանցումով Սպառողի կողմից էլեկտրաէնեգիա սպառելու դեպքում սպառված էլեկտրաէներգիայի քանակը որոշվում է Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված կարգով:

## 7. ՖՈՐՍ-ՄԱԺՈՐԱՅԻՆ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐ

33. Կողմերը սույն պայմանագրով սահմանված պարտավորությունների խախտման համար պատասխանատվություն չեն կրում, եթե այն հետևանք է ֆորս-մաժորի: Սույն պայմանագրի իմաստով ֆորս մաժոր են համարվում արտակարգ և անկանխելի այն դեպքերն ու հանգամանքները, որոնք առաջացել են կողմերի կամքից անկախ և միևնույն ժամանակ անկախ վերջիններիս գործադրած ջանքերից, խոչընդոտել են պարտավորությունների կատարմանն ուղղված Կողմերի գործողություններին:

34. Սույն պայմանագրի իմաստով արտակարգ և անկանխելի դեպքեր և հանգամանքներ են պետական իրավասու մարմինների կողմից ընդունված ակտերը, վերջիններիս գործողությունները կամ անգործությունը, բնական և տեխնածին աղետները, բնության ուժերի արտասովոր դրսևորումները (այդ թվում՝ ջրհեղեղներ, երկրաշարժեր, փոթորիկներ, պտտահողմեր, կայծակով և ամպրոպով ուղղորդվող հորդառատ անձրևներ, ձնաբքեր, սողանքներ), գործադուլները, հասարակական անկարգությունները, ահաբեկչությունները, պատերազմները, ապստամբությունները: Սույն կետը չի սահմանափակում կողմերի իրավունքը նկարագրվածից բացի այլ արտակարգ և անկանխելի դեպքեր և հանգամանքներ ի հայտ գալու պարագայում դիմել Հանձնաժողով՝ դրանք ֆորս-մաժոր ճանաչելու համար:

35. Կողմերը պարտավոր են վերոհիշյալ իրավիճակների մասին անհապաղ տեղեկացնել միմյանց՝ նշելով դրանց հետևանքների վերացման հնարավոր ժամկետները:

## 8. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՈՒՄԸ

36. Սույն պայմանագրի առնչությամբ Կողմերի միջև ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով, իսկ Կողմերից մեկի գրավոր դիմումի դեպքում՝ Հանձնաժողովի միջնորդությամբ:

37. Սույն պայմանագրի 36-րդ կետը չի սահմանափակում Կողմերի իրավունքը՝ վեճերը լուծելու դատական կարգով:

## 9. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆԵԼՈՒ, ՓՈՓՈԽՄԱՆ ԵՎ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ, ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

38. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է _______________ ժամկետով: Պայմանագիրը բոլոր դեպքերում կնքվում է անորոշ ժամկետով, եթե ԷՄՕԿ-ով տվյալ դեպքի համար նախատեսված չէ ժամանակավոր պայմանագրի կնքում:

39. Սույն պայմանագրի 38-րդ կետի համաձայն ժամանակավոր պայմանագրի կնքման դեպքում ժամկետը լրանալուց մեկ ամիս առաջ Կողմերից յուրաքանչյուրը կարող է ծանուցել մյուս կողմին պայմանագրի գործողության դադարեցման մասին: Եթե ժամկետի ավարտից հետո Սպառողը Մատակարարի ծանուցման բացակայությամբ շարունակում է սպառել էլեկտրական էներգիա, սույն պայմանագրի գործողությունը համարվում է երկարաձգված՝ նույն պայմաններով և նույն ժամկետով:

40. Սույն պայմանագիրը լուծվում է՝

1) կողմերի փոխադարձ համաձայնությամբ.

2) Սպառողի կողմից միակողմանի՝ այդ մասին Մատակարարին տեղեկացնելու և մատուցված ծառայությունների համար ամբողջությամբ վճարելու պայմանով.

3) Մատակարարի կողմից միակողմանի՝ Հայաստանի Հանրապետության օրենքներով, ԷՄՕԿ-ով և սույն պայմանագրով նախատեսված դեպքերում՝ այդ մասին Սպառողին նախապես տեղեկացնելու պայմանով:



41. Հանձնաժողովի կողմից էլեկտրական էներգիայի մատակարարման պայմանագրի նոր օրինակելի ձև հաստատվելու կամ գործող օրինակելի ձևում փոփոխություններ կամ լրացումներ կատարվելու դեպքում Կողմերը պարտավոր են Հանձնաժողովի սահմանած ժամկետում կնքել նոր պայմանագիր կամ համապատասխան փոփոխություններ կամ լրացումներ կատարել գործող պայմանագրում:

42. Սույն պայմանագրում Կողմերի փոխադարձ համաձայնությամբ փոփոխություններ կարող են կատարվել գրավոր, պայմանով, որ չեն հակասում սույն պայմանագրին, ԷՄՕԿ-ին, Հանձնաժողովի ընդունած և այլ իրավական ակտերին:

43. Սույն պայմանագրի փոփոխումը կամ դադարումը Կողմերին չի ազատում մինչ այդ պայմանագրով ստանձնած և չկատարված պարտավորությունների կատարումից:

44. Սույն պայմանագիրը կնքված է հավասար իրավաբանական ուժ ունեցող երկու օրինակից, մեկական՝ յուրաքանչյուր կողմի համար:

## 10. ԿՈՂՄԵՐԻ ԾԱՆՈՒՑՈՒՄԸ

45. Կողմերը պարտավոր են գրությունները, ծանուցումները և այլ փաստաթղթերը միմյանց հանձնել պատշաճ ձևով: Փաստաթղթերը համարվում են պատշաճ ձևով հանձնված, եթե դրանք ուղարկվել են պատվիրված նամակով՝ հանձնման մասին ծանուցմամբ՝ սույն պայմանագրով նշված ծանուցման վայրի հասցեով, կամ հանձնվել են առձեռն՝ ստացականով, եթե առանձին դեպքերի համար ԷՄՕԿ-ով կամ սույն պայմանագրով նախատեսված չէ պատշաճ հանձնման կոնկրետ ձև:

46. Կողմերը պարտավոր են սույն պայմանագրում նշված ծանուցման վավերապայմանների փոփոխության դեպքում այդ մասին գրավոր տեղեկացնել միմյանց այդպիսի փոփոխության պահից 7 օրվա ընթացքում:

47. Այն դեպքում, երբ Կողմը գրավոր չի տեղեկացրել իր ծանուցման վայրի հասցեի փոփոխության մասին, ապա սույն պայմանագրում նշված ծանուցման վայրով ուղարկված փաստաթուղթը համարվում է պատշաճ ձևով հանձնված:

## 11. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՆԲԱԺԱՆԵԼԻ ՄԱՍ ԿԱԶՄՈՂ ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐԻ ՑԱՆԿԸ

48. Սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող հավելվածներն են՝

1) Սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացման տեխնիկական պայմանների մասին N1 հավելվածը, որը չի լրացվում բազմաբնակարան շենքերում բնակվող բնակիչների դեպքում.

2) Սպառողի էլեկտրամատակարարման միագիծ սխեմայի մասին N2 հավելվածը, որը չի լրացվում բազմաբնակարան շենքերում բնակվող բնակիչների դեպքում.

3) Սպառողի (Ենթասպառողի) առևտրային (վերստուգիչ) հաշվառքի սարքի տվյալների մասին N3 հավելվածը.

4) Սպառողի (Ենթասպառողի) սնման ուղղության, լարման, առավելագույն թույլատրելի հզորության վերաբերյալ N4 հավելվածը.

5) Մատակարարի էլեկտրական ցանցի և Սպառողի սպառման համակարգի սահմանազատման կետի և էլեկտրատեղակայանքների շահագործման պատասխանատվության սահմանազատման վերաբերյալ ակտի մասին N5 հավելվածը, որը չի լրացվում բազմաբնակարան շենքերում բնակվող բնակիչների դեպքում.

6) 0.4կՎ և բարձր լարման սպառողների (բացառությամբ բնակչության) համար սահմանվող լրացուցիչ պայմանների մասին N6 հավելվածը:



## 12. ԿՈՂՄԵՐԻ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

**Մատակարար՝**

"ՀԷՑ" ՓԲԸ

"Կենտրոն" ՏՀՏ

Գտնվելու վայրը [illegible] 127

Հեռախոս 012 65 16 78

Էլ. փոստ KentronTHT@ena.am

ՀՎՀՀ

Հ/h 2474663150555100

Բանկ 2474600895162010 [illegible]

Գործունեության լիցենզիա N

(ստորագրություն, անուն, ազգանուն)

Կ.Տ.

(առկայության դեպքում)

2474663150555100

**Սպառող՝** [illegible]

Գտնվելու վայրը (բնակության վայրը)՝ [illegible] 5

Ծանուցման հասցեն՝

Էլ. փոստ

Հեռախոս

ՀՎՀՀ (իրավաբանական անձի դեպքում) 01505065

Բանկ [illegible]

Հ/h [illegible] 314

(ստորագրություն, անուն, ազգանուն)

## ՍՊԱՌՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԻՆ ՄԻԱՑՄԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

## ՍՊԱՌՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԻՆ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՄԻԱՑՄԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Հզորությունը ________ կՎԱ

Լարումը 0,4 կվ

տեղակայված է ______ ԿՎԱ հզորության տրանսֆորմատորային ենթակայան:

Սնումն իրականացվում է ՏԿ 20 [illegible]

Հաշվառքի սարքերը տեղադրված են ____________

**Մատակարար՝**

(անուն, ազգանուն, պաշտոն)

(ստորագրություն)

**Սպառող՝**

(անուն, ազգանուն)

(ստորագրություն)





## ՍՊԱՌՈՂԻ ԷԼԵԿՏՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՄԻԱԳԻԾ ՍԽԵՄԱՆ




**Մատակարար՝**

(անուն, ազգանուն, պաշտոն)

(ստորագրություն)

**Սպառող՝**

(անուն, ազգանուն)

(ստորագրություն)

*Հավելված N3*
*Էլեկտրական էներգիայի մատակարարման պայմանագրի*

## ՍՊԱՌՈՂԻ (ԵՆԹԱՍՊԱՌՈՂԻ) ԱՌԵՎՏՐԱՅԻՆ (ՎԵՐՍՏՈՒԳԻՉ) ՀԱՇՎԱՌՔԻ ՍԱՐՔԻ ՏՎՅԱԼՆԵՐԸ

| | Հաշվառքի սարքի տեղադրման վայրը | Առևտրային հաշվառքի սարք (վերստուգիչ հաշվառքի սարք) | | | | | | | | | | Սպառողի սեփականությունը հանդիսացող կամ իր կողմից տնօրինվող տարածքներում առևտրային հաշվառքի սարքի ամբողջականության պահպանման պատասխանատու կողմը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | Հաշվիչի | | | | Հոսանքի չափիչ | | | Լարման չափիչ տրանսֆորմատորի | | | |
| | | | | | | | տրանսֆորմատորի | | | | | |
| | | տեսակը, գործարանային համարը, կնիքի տեսակը, համարը | թույլատրելի հոսանքը (Ա) | անվանական լարումը (Վ) | հաջորդ պլանային ստուգաչափման ամիսը և տարեթիվը | տեսակը, գործարանային համարը, սպառողի կնիքի տեսակը, համարը | ճշտության դասը | տրանսֆորմացիայի գործակիցը | տեսակը, գործարանային համարը, սպառողի կնիքի տեսակը, համարը | ճշտության դասը | տրանսֆորմացիայի գործակիցը | |
| | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 |
| 1 | Տն 20 | САЧУ-1672М | 5 | 220/380 | 2000/II | | | 40 | | | | |
| 2 | | 175366 | | | | | | | | | | |
| 3 | | 5 | | | | | | | | | | |
| 4 | | 2000/II | | | | | | | | | | |
| 5 | | САЧУ-1672М. | 5 | 220/380 | 1999/II | | | 30 | | | | |
| 6 | | 206288 | | | | | | | | | | |
| 7 | | 5 | | | | | | | | | | |
| 8 | | 1999/II | | | | | | | | | | |
| 9 | | | | | | | | | | | | |
| 10 | | | | | | | | | | | | |
| 12 | | | | | | | | | | | | |
| 13 | | | | | | | | | | | | |
| 14 | | | | | | | | | | | | |

| Հաշվառքի սարքի տեղադրման վայրը | Առևտրային հաշվառքի սարք (վերստուգիչ հաշվառքի սարք) | | | | | | | | | | Սպառողի սեփականությունը հանդիսացող կամ իր կողմից տնօրինվող տարածքներում առևտրային հաշվառքի սարքի ամբողջականության պահպանման պատասխանատու կողմը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Հաշվիչի | | | | Հոսանքի չափիչ տրանսֆորմատորի | | | Լարման չափիչ տրանսֆորմատորի | | | |
| | տեսակը, գործարանային համարը, կնիքի տեսակը, համարը | թույլատրելի հոսանքը (Ա) | անվանական լարումը (Վ) | հաջորդ պլանային ստուգաչափման ամիսը և տարեթիվը | տեսակը, գործարանային համարը, սպառողի կնիքի տեսակը, համարը | ճշտության դասը | տրանսֆորմացիայի գործակիցը | տեսակը, գործարանային համարը, սպառողի կնիքի տեսակը, համարը | ճշտության դասը | տրանսֆորմացիայի գործակիցը | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 |
| 15 | | | | | | | | | | | |
| 16 | | | | | | | | | | | |
| 17 | | | | | | | | | | | |
| 18 | | | | | | | | | | | |
| 19 | | | | | | | | | | | |
| 20 | | | | | | | | | | | |
| 21 | | | | | | | | | | | |
| 22 | | | | | | | | | | | |
| 23 | | | | | | | | | | | |
| 24 | | | | | | | | | | | |
| 25 | | | | | | | | | | | |
| 26 | | | | | | | | | | | |
| 27 | | | | | | | | | | | |

**Մատակարար՝**

(անուն ազգանուն, պաշտոն)

(ստորագրություն)

**Սպառող**

(անուն, ազգանուն)

(ստորագրություն)

## ՍՊԱՌՈՂԻ (ԵՆԹԱՍՊԱՌՈՂԻ) ՍՆՄԱՆ ՈՒՂՈՒԹՅԱՆ, ԼԱՐՄԱՆ, ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ ԹՈՒՅԼԱՏՐԵԼԻ ՀԶՈՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

| N ը.հ. | Սնման ուղղության անվանումը | Հասցեն | Էլեկտրա-ընդունիչների կարգը (I,II,III) | Սահմանա-զատման կետի լարումը (կՎ) | Առավելագույն թույլատրելի հզորություն (կՎտ ) | Աշխատանքային օրերի և ժամերի քանակը (ժամ) | Հայտարարված առավելագույն բեռը (կՎտ) աշխատանքային և ոչ աշխատանքային ժամերին |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
| 1 | [illegible] | | | | | | |
| 2 | [illegible] | [illegible] | | | | | |
| 3 | [illegible] | | | | | | |



1. Սույն աղյուսակի 6-րդ սյունակը լրացվում է համաձայն սպառողին տրված տեխնիկական պայմանների: Տեխնիկական պայմանների բացակայության դեպքում 6-րդ սյունակը լրացվում է՝

1) 0.22 կՎ լարման սպառողների համար՝ հաշվիչի թույլատրելի հոսանքի և անվանական լարման արտադրյալով.

2) 0.4 կՎ լարման սպառողների համար՝ հաշվիչի թույլատրելի հոսանքի, անվանական լարման և հոսանքի չափիչ տրանսֆորմատորի տրանսֆորմացիայի գործակցի արտադրյալով.

3) 6 (10) կՎ և բարձր լարման սպառողների համար՝ հաշվիչի թույլատրելի հոսանքի, անվանական լարման, հոսանքի չափիչ տրանսֆորմատորի տրանսֆորմացիայի գործակցի և լարման չափիչ տրանսֆորմատորի տրանսֆորմացիայի գործակցի արտադրյալով:

2. Սույն աղյուսակի 4-րդ սյունակը լրացվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի դեկտեմբերի 21-ի N1943Ն որոշմամբ հաստատված՝ «Էլեկտրատեղակայանքների սարքվածքներին ներկայացվող ընդհանուր պահանջներ» տեխնիկական կանոնակարգում նշված էլեկտրաընդունիչների կարգերի համաձայն:

**Մատակարար՝**

(անուն ազգանուն, պաշտոն)

(ստորագրություն)

Սպառող

(անուն ազգանուն)

(ստորագրություն)

## Ա Կ Տ
## ՄԱՏԱԿԱՐԱՐԻ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԻ ԵՎ ՍՊԱՌՈՂԻ ՍՊԱՌՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՍԱՀՄԱՆԱԶԱՏՄԱՆ ԿԵՏԻ ԵՎ ԷԼԵԿՏՐԱՏԵՂԱԿԱՅԱՆՔՆԵՐԻ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԶԱՏՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Կողմերի սահմանազատման կետն է՝ ՏԵ 20 նկուղային կ/լ վահան ___:

2. Կողմերի էլեկտրատեղակայանքների շահագործման պատասխանատվության սահմանազատման կետն է՝ ___
___:

3. Սպառողի և ենթասպառողի էլեկտրատեղակայանքների սահմանազատման կետն է՝ ___
___:

**Մատակարար՝**

___

___
(անուն ազգանուն, պաշտոն)

___
(ստորագրություն)

**Սպառող՝**

___
(անուն ազգանուն, պաշտոն)

___
(ստորագրություն)





## 0,4 ԿՎ ԵՎ ԲԱՐՁՐ ԼԱՐՄԱՆ ՍՊԱՌՈՂՆԵՐԻ (ԲԱՑԱՌՈՒԹՅԱՄԲ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ) ՀԱՄԱՐ ՍԱՀՄԱՆՎՈՂ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՊԱՅՄԱՆՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտերով նախատեսված դեպքերում՝ Կողմերը պարտավոր են սույն պայմանագրին կցել անբաժանելի մաս հանդիսացող տեխնոլոգիական և (կամ) վթարային հզորությունների ամրագրման վերաբերյալ ակտը, որը կազմվում է համաձայն ԷՄՕԿ-ով սահմանված կարգի:

2. Երբ նվազագույն բեռնվածքի ռեժիմներում տեխնիկապես անհնար է առևտրային հաշվառքի սարքերի բնականոն աշխատանքը, սպառված էլեկտրաէներգիայի քանակությունը հաշվարկվում է նվազագույն բեռնվածքի ամբողջ ժամանակահատվածում փաստացի միացված էլեկտրական ընդունիչների հզորության հիման վրա և ավելացվում առևտրային հաշվիչի ցուցմունքով հաշվարկված էլեկտրաէներգիայի քանակությանը ԷՄՕԿ-ով սահմանված կարգով:

3. Մատակարարը կամ Սպառողը կարող են սահմանազատման կետերում տեղադրել էլեկտրական էներգիայի որակի ցուցանիշները գրանցող և հիշող սարքեր, որի վերաբերյալ կազմում են երկկողմանի ակտ և կցում սույն պայմանագրին:

4. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված էլեկտրաէներգիայի որակը խախտելու դեպքում պատճառները և որակի ցուցանիշներից շեղումներով էլեկտրաէներգիայի մատակարարման ժամանակահատվածը որոշվում են Մատակարարի կամ Սպառողի չափիչ սարքերի գրանցումներով, իսկ այդ սարքերի բացակայության դեպքում՝ համապատասխան հաշվարկներով, Մատակարարի և Սպառողի օպերատիվ փաստաթղթերի գրառումների հիման վրա: Այդ մասին Մատակարարը և Սպառողը կազմում են երկկողմանի ակտ:

5. Որակի ցուցանիշներից շեղումներով էլեկտրաէներգիա մատակարարելու համար Մատակարարը փոխհատուցում է Սպառողի կրած վնասը Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

6. Սպառողի (բացառությամբ բնակչության) սարքավորումները, ռելեական պաշտպանության և ավտոմատիկայի սարքվածքները մատակարարի օպերատիվ ենթակայությանը հանձնելու դեպքում Կողմերը պարտավոր են այն իրականացնել ԷՄՕԿ-ով սահմանված՝ «Մատակարարի և Սպառողի (բացառությամբ բնակչության) օպերատիվ փոխհարաբերությունների» կարգով

Մատակարարը՝ «Վեոլիա Ջուր» ՓԲԸ Ք.Երևան,Աբովյան 66ա
(կազմակերպության անվանումը, գտնվելու վայրը)

ի դեմս Գլխավոր տնօրեն Կրիստիան Լըֆեի, որը գործում է
(անունը, ազգանունը, պաշտոնը)

Ընկերության կանոնադրության և ԼՋ N 0001 Լիցենզիայի
(գործունեությունը կարգավորող փաստաթղթի անվանումը),

հիման վրա, մի կողմից, և բաժանորդը՝

<<[illegible]>> ՊՈԱԿ
(իրավաբանական անձի կամ իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող)

[illegible],
(կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ անվանումը (անունը, ազգանունը), գտնվելու (բնակության) վայրը, միացման կետի հասցեն)

ի դեմս [illegible],
(պաշտոնը, անունը, ազգանունը)

որը (ով) գործում է կանոնադրության հիման վրա,
(գործունեությունը կարգավորող փաստաթղթի անվանումը)

մյուս կողմից, համատեղ կոչվելով կողմեր, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

## 1. ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Սույն պայմանագրում օգտագործվող հիմնական հասկացություններն են.

1) **հանձնաժողով**՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով.

2) **կանոններ**՝ հանձնաժողովի կողմից հաստատված խմելու ջրի մատակարարման եվ ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման կանոններ.

3) **առևտրային հաշվառքի սարք**՝ պետական չափագիտական մարմնի կողմից ստուգաչափված ու կապարակնքված Խմելու ջրի քանակի հաշվառքի սարք, որի նույնականացման տվյալներն ամրագրվում են սույն պայմանագրում.

4) **առևտրային հաշվառքի սարքի խախտում**՝ պետական չափագիտական մարմնի փորձագիտական եզրակացությամբ հաստատված առևտրային հաշվառքի սարքի առանձին մասի խափանումը կամ վնասումը, կամ կապարակնիքի բացակայությունը կամ վնասումը, կամ կեղծումը, կամ սարքի բնականոն աշխատանքի որևէ այլ խաթարումը՝ արտաքին միջամտությամբ կամ առանց դրա.

5) **հաշվարկային ամիս**՝ ժամանակահատված, որը սկսվում է օրացուցային ամսվա առաջին օրվա ժամը 00:00-ին և ավարտվում է վերջին օրվա ժամը 24:00-ին.

6) **տեխնիկական պայմաններ**՝ մատակարարի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգին միանալու, բաժանորդին մատակարարված խմելու ջուրը

հաշվառելու, մատակարարի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգի անվտանգ շահագործումն ապահովելու նպատակով մատակարարի կողմից առաջադրվող պայմաններ, որոնք սահմանվում են՝ ելնելով մատակարարի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգի թողունակության, հուսալիության, այլ անձանց իրավունքներն ու օրինական շահերը չխախտելու և դիմող անձի նոր միացման համար անհրաժեշտ ընդլայնման աշխատանքները նվազագույն ծախսերով իրականացնելու պայմաններից:

## 2. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

2. Մատակարարը պարտավորվում է բաժանորդին մատուցել՝

խմելու ջրի ջրամատակարարման և ջրահեռացման

(խմելու ջրի մատակարարման և (կամ) ջրահեռացման (կեղտաջրերի հեռացման))

ծառայություններ (այսուհետ՝ ծառայություններ), իսկ բաժանորդը՝ վճարել դրանց դիմաց՝ կանոններով և սույն պայմանագրով սահմանված կարգով և ժամկետներում:

## 3.ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3. Մատակարարի և բաժանորդի փոխհարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենքներով, կանոններով, սույն պայմանագրով և այլ իրավական ակտերով:

4. Բաժանորդը պարտավոր է՝

1) վճարել մատուցված ծառայությունների դիմաց՝ կանոններով և սույն պայմանագրով սահմանված կարգով ու ժամկետում,

2) թույլ չտալ առևտրային հաշվառքի սարքի խախտում,

3) պահպանել հեռացվող կեղտաջրերի բաղադրությունը՝ համաձայն տեխնիկական պայմանների,

4) մատակարարի ներկայացուցչի կողմից ծառայողական վկայական ներկայացնելու դեպքում չխոչընդոտել նրա մուտքն իր սեփականությունը հանդիսացող կամ այլ իրավական հիմքով տիրապետվող տարածք՝ առևտրային հաշվառքի սարքի ցուցմունքի գրանցման, ապօրինի միացման կամ առևտրային հաշվառքի սարքի (անկախ դրա պատկանելությունից) խախտման դեպքերի առկայության համատեղ ստուգման նպատակով,

5) առևտրային հաշվառքի սարքի խախտման կամ մատակարարված խմելու ջրի որակի վերաբերյալ կասկած առաջանալու պարագայում առաջին իսկ հնարավորության դեպքում այդ մասին տեղեկացնել մատակարարին,

6) ջրամատակարարվող տարածքի նկատմամբ իրավունքի դադարման դեպքում դիմել մատակարարին՝ վերջնահաշվարկ կատարելու, սույն պայմանագիրը լուծելու և ծառայությունների մատուցումը դադարեցնելու համար, ինչի վերաբերյալ մատակարարը տեղեկանք է տալիս բաժանորդին:



5. Բաժանորդն իրավունք ունի՝

1) մատակարարի կողմից նախորդ հաշվարկային ամսում մատուցված ծառայությունների դիմաց հաշվարկային փաստաթուղթ չներկայացնելու դեպքում կանոններով սահմանված կարգով չվճարել մատուցված ծառայությունների դիմաց,

2) պահանջել, որ մատակարարն առևտրային հաշվառքի սարքի հետ կապված որևէ աշխատանք, ներառյալ ապահավաքակցումը կամ ստուգաչափումը, իրականացնի իր ներկայությամբ՝ կանոններով սահմանված կարգով և ժամկետում,

3) կապարակնքել առևտրային հաշվառքի սարքը,

4) մասնակցել առևտրային հաշվառքի սարքի ցուցմունքի գրանցմանը:

6. Մատակարարը պարտավոր է՝

1)ապահովել բաժանորդին ծառայությունների հուսալի մատուցումը՝ ծառայություններին ներկայացվող նորմատիվ պահանջներին համապատասխան, իսկ սույն պայմանագրով նախատեսված դեպքերում նաև՝ պայմանագրով ամրագրված չափաքանակներով,

2) իր հաշվին իրականացնել առևտրային հաշվառքի սարքի տեղակայումը և կապարակնքումը՝ կանոններով սահմանված կարգով,

3)առևտրային հաշվառքի սարքի ապահավաքակցումը, ստուգաչափումն իրականացնել կանոններով սահմանված կարգով և ժամկետում,

4) առևտրային հաշվառքի սարքի ստուգաչափման դեպքում իր հաշվին տեղակայել նոր առևտրային հաշվառքի սարք՝ կանոններով սահմանված կարգով և ժամկետում,

5) կանոններով սահմանված կարգով և ժամկետում սպառիչ պատասխանել բաժանորդի դիմումին՝ հանգամանորեն ներկայացնելով դիմումի առնչությամբ գործող իրավական դաշտը, կողմերի իրավունքներն ու պարտականությունները,

6) բաժանորդի ջրամատակարարման դադարեցումը կամ ընդհատումը, դրա վերականգնումը, ինչպես նաև այդ մասին բաժանորդին իրազեկումն իրականացնել կանոններով սահմանված կարգով և ժամկետում,

7) կազմել և բաժանորդին ներկայացնել մատակարարված ծառայությունների համար հաշվարկային փաստաթուղթը՝ սույն պայմանագրի և կանոնների համաձայն,

8) բաժանորդի կողմից հաշվարկային փաստաթղթում վճարման ենթակա գումարի հաշվարկի ճշտությանը կասկածելու դեպքում վերջինիս պահանջով կանոններով սահմանված ժամկետում պարզաբանել մատուցված ծառայությունների քանակի և դրանց դիմաց վճարման ենթակա գումարի հաշվարկված մեծությունների ճշտությունը, անհրաժեշտության դեպքում կանոնների համաձայն կատարել ուղղում, չդադարեցնել բաժանորդի ջրամատակարարումը, եթե վերջինս վճարել է ծառայությունների՝ իր կողմից չվիճարկվող մասի արժեքը: Բաժանորդը պետք է ողջամտորեն հիմնավորի իրեն մատուցված ծառայությունների վիճարկվող մասի արժեքը՝ հիմնավորումները գրավոր ներկայացնելով մատակարարին,

9) գործարկել բաժանորդին հասանելի շուրջօրյա հեռախոսակապ:

7. Մատակարարն իրավունք ունի՝

1) Բաժանորդին ծառայողական վկայական ներկայացնելով և վերջինիս սեփականությունը հանդիսացող կամ այլ իրավական հիմքով տիրապետվող

տարածք մուտք գործելով, բաժանորդի հետ համատեղ ստուգել առևտրային հաշվառքի սարքի ցուցմունքի գրանցման, ապօրինի միացման կամ առևտրային հաշվառքի սարքի (անկախ դրա պատկանելությունից) խախտման դեպքերի առկայությունը,

2) միակողմանի լուծել սույն պայմանագիրը՝ բաժանորդի կողմից սույն պայմանագրի 4-րդ կետի 6-րդ ենթակետով նախատեսված պարտավորությունը չկատարելու դեպքում:

## 4. ՄԱՏՈՒՑՎԱԾ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔԱՆԱԿԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ

8. Բաժանորդին հաշվարկային ամսում մատակարարված խմելու ջրի քանակը որոշվում է պայմանագրի հավելվածում նշված առևտրային հաշվառքի սարքի գրանցած ցուցմունքներով, իսկ դրա բացակայության դեպքում՝ կանոնների համաձայն:

9. Ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) դեպքում հաշվարկման և վերահաշվարկման ժամանակ հեռացվող ջրի (մաքրվող կեղտաջրերի) քանակն ընդունվում է հավասար բաժանորդին մատակարարված խմելու ջրի քանակին: Սույն պայմանագրով կարող է սահմանվել, որ հեռացվող ջրի (մաքրվող կեղտաջրերի) քանակը հաշվարկվում է առևտրային հաշվառքի սարքի միջոցով:

10. Առևտրային հաշվառքի սարքի ցուցմունքը գրանցում է մատակարարը՝ կանոններով սահմանված կարգով և ժամկետում:

11. Առևտրային հաշվառքի սարքի խախտման դեպքում կատարվում է բաժանորդին մատակարարված խմելու ջրի քանակի և արժեքի վերահաշվարկ՝ կանոններով սահմանված կարգով և ժամկետում:

12. Բաժանորդի կողմից վերահաշվարկի արդյունքին անհամաձայնության դեպքում տարաձայնությունները լուծվում են կանոններով սահմանված կարգով և ժամկետներում, ընդ որում՝ վերահաշվարկված խմելու ջրի արժեքի՝ բաժանորդի կողմից ողջամտորեն հիմնավորված չվիճարկվող մասի վճարման դեպքում բաժանորդին ծառայությունների մատուցումը չի դադարեցվում՝ մինչև վեճի վերջնական լուծումը:

## 5. ՄԱՏԱԿԱՐԱՐՎԱԾ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

13. Հաշվարկային ամսվա ընթացքում բաժանորդին մատուցված ծառայությունների արժեքը որոշվում է հանձնաժողովի սահմանած սակագների և մատակարարված ծառայությունների քանակի արտադրյալով:

14. Հանձնաժողովի սահմանած սակագնի փոփոխման դեպքում նոր սակագինն ուժի մեջ է մտնում հանձնաժողովի սահմանած ժամկետից:

15. Հաշվարկային ամսվա համար բաժանորդին մատուցված ծառայությունների դիմաց մատակարարը կազմում և բաժանորդին է ներկայացնում հաշվարկային փաստաթուղթ՝ կանոններով սահմանված կարգով:

16. Բաժանորդը հաշվարկային ամսվա համար իրեն մատուցված ծառայությունների դիմաց վճարում է կանոններով սահմանված կարգով:



17. Կանոններով սահմանված ժամկետում վճարում չկատարվելու դեպքում մատակարարը կանոններով սահմանված կարգով և ժամկետում զգուշացնում է բաժանորդին՝ վճարման, իսկ վճարումը չկատարելու դեպքում՝ ծառայությունների մատուցման դադարեցման մասին: Եթե զգուշացման պահից կանոններով սահմանված ժամկետում բաժանորդը վճարում չի կատարում, ապա մատակարարն իրավունք ունի դադարեցնել ծառայությունների մատուցումը: Բաժանորդի կողմից պարտքն ամբողջությամբ վճարելուց և այդ մասին մատակարարին հայտնելուց (այդ թվում՝ հեռախոսով կամ էլեկտրոնային հաղորդակցության միջոցներով) հետո Մատակարարը պարտավոր է վերսկսել բաժանորդին ծառայությունների մատուցումը: Ծառայությունների մատուցումը վերսկսելուց առաջ մատակարարը իրավունք ունի տեղում ստուգել բաժանորդի վճարումը հաստատող փաստաթուղթը:

18. Մատակարարն իրավունք չունի մատակարարվող ծառայությունների համար բաժանորդից պահանջել վճարել կանխավճար կամ ներկայացնել վճարման երաշխիք:

19. Առևտրային հաշվառքի սարքի խախտման դեպքում վերահաշվարկած խմելու ջրի արժեքը և տույժերը (հաշվարկված լինելու դեպքում) վճարվում են կանոններով սահմանված կարգով և ժամկետում:

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

20. Պայմանագրային պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում կողմերը պատասխանատվություն են կրում սույն պայմանագրով, կանոններով և Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված կարգով:

21. Մատուցված ծառայությունների դիմաց վճարման ենթակա գումարը չվճարելու դեպքում ոչ բնակիչ բաժանորդը մատակարարին յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարվում է տուժանք՝ չվճարված գումարի 0,1 տոկոսի չափով, բայց ոչ ավելի, քան 365 օրվա համար:

22. Մատակարարը կանոններով սահմանված դեպքերում բաժանորդին վճարում է տուժանք՝ կանոններով սահմանված չափով և կարգով:

23. Մատակարարը և բաժանորդը միմյանց պատճառած վնասի համար կրում են պատասխանատվություն Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված կարգով:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ
(լրացնում են Կողմերը)

24. Սույն գլխում կողմերի սահմանած այլ պայմանները չեն կարող հակասել սույն պայմանագրին, կանոններին և հանձնաժողովի այլ իրավական ակտերին:

25. ______6-13-44______:

## 8. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺ (ՖՈՐՍ ՄԱԺՈՐ)

26. Կողմերը պայմանագրով սահմանված պարտավորությունների խախտման համար պատասխանատվություն չեն կրում, եթե այն հետևանք է ֆորս մաժորի:

Հավելված
խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման
(կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման
(մատակարար - ոչ բնակիչ բաժանորդ)
օրինակելի պայմանագրի

## ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՀԱՇՎԱՌՔԻ ՍԱՐՔԻ ՄԱՍԻՆ

### 1. Առևտրային հաշվառքի սարքի տեխնիկական տվյալները

| № | Անվանումը | Մակնիշը | Գործարանային № | Առևտրային հաշվառքի սարքի տրամագիծը | Տեղադրման վայրը | Տեղադրման ամսաթիվը |
|---|---|---|---|---|---|---|
| 1. | G-13-44_1 | KMEI | 047983 | 32 | [illegible] | |
| 2. | | | | | | |
| 3. | | | | | | |
| 4. | | | | | | |

Մատակարար՝ «Վեոլիա Ջուր» ՓԲԸ
Գտնվելու վայրը՝ Ք.Երևան, Աբովյան 66ա
Հեռախոս՝ 1-85
ՀՎՀՀ՝ 02655115
Էլ. փոստ՝ office@veoliadjur.am
Հ/h 1150035156201 5
Բանկ՝ «Հայէկոնոմբանկ» ՓԲԸ
Գործունեության լիցենզիա ԷՋ N 0001
Գլխավոր տնօրեն՝ Գ. Լըֆեև

(ստորագրություն, անուն, ազգանուն)

Կ.Տ.

Կատարող՝ [signature]
(Ստորաբաժանման անվանումը)
(Ստորագրություն)
(պաշտոնը և անուն, ազգանուն)

Բաժանորդ՝ [illegible]
Գտնվելու վայրը (բնակության վայրը)՝ [illegible]
Ծանուցման հասցեն՝ [illegible]
Էլ. փոստ [illegible]
Հեռախոս 010564426 / 010563983
ՀՎՀՀ 02505065
Բանկ [illegible]
Հ/h 2200019100610000
Ղեկավար (ֆիզիկական անձ) [signature]
(ստորագրություն, անուն, ազգանուն)

Կ.Տ. (առկայության դեպքում)

ՃԲԴ - Ա-0109

# ԱՐՏՈՆԱԳԻՐ

## ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՍ

### ԵՆԹԱԴԱՍ «Ա»

ՃԱՐՏԱՐԱՊԵՏ

## ՀՈՎՍԵՓՅԱՆ ԷԴՈՒԱՐԴ ԳԱՐՈՒՇԻ

Ճարտարապետի մասնագիտական գործունեության իրականացում առանց սահմանափակումների, բացառությամբ տարածական պլանավորման փաստաթղթերի, պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների վերականգնման, ամրակայման և օգտագործման նախագծերի մշակման:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՆԵՐԻ ՊԱԼԱՏ
ՆԱԽԱԳԱՀ Մ. ՄԻՆԱՍՅԱՆ

ՀՀ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ
ՆԱԽԱԳԱՀԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԿԱՏԱՐՈՂ Ե. ՂՈՒԼԱՐՅԱՆ

ՏՐՎԱԾ Է 15.03.2019
ԱՆԺԱՄԿԵՏ

ԿԱԴ - Ա1-006

# ԱՐՏՈՆԱԳԻՐ

## ԱՌԱՋԻՆ ԴԱՍ

## ԵՆԹԱԴԱՍ «Ա1»

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ, ԲՆԱԿԵԼԻ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՇԵՆՔԵՐԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԾՈՒՄ

ՃԱՐՏԱՐԱԳԵՏ - ԿՈՆՍՏՐՈՒԿՏՈՐ

## ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐԱՄ ԺՈՐԱՅԻ

Սահմանափակումներ՝ Արդյունաբերական, բնակելի և հասարակական ոչ ավել 16 հարկից,
մինչև 51մ բարձրությամբ շենքեր, մինչև 50մ թռիչքով տարածական կոնստրուկցիաներով շինություններ,
ավտոմոբիլային և երկաթուղային ճանապարհների մաս կազմող արհեստական կառույցներ,
որոնք համապատասխանում են մինչև IV ռիսկայնության աստիճանի,
բացառությամբ քաղաքաշինական նորմատեխնիկական փաստաթղթերով
սահմանային հարաչափերը (բարձրություն, երկարություն, լայնություն) գերազանցող շենքերի և կառույցների:
Վերը նշված վերակառուցում, վերականգնում և ուժեղացում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ
ՆԱԽԱԳԱՀ Մ. ՄԻՆԱՍՅԱՆ

ՀՀ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ
ՆԱԽԱԳԱՀ Ա. ԷԼՈՅԱՆ

ՏՐՎԱԾ Է 20.12.2018
ԱՆԺԱՄԿԵՏ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

# ԼԻՑԵՆԶԻԱ

ՔՊԼ-001379, 1-ին դաս

*(սերիան, համարը, դասը)*

ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԿԱԶՄՈՒՄ՝ ԲԱՑԱՌՈՒԹՅԱՄԲ ԿՈՆՍՏՐՈՒԿՏՈՐԱԿԱՆ ԵՎ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԱՍԵՐԻ

*(քաղաքաշինության բնագավառում գործունեության տեսակը)*

ՏՐՎԱԾ Է

2024-10-10, «ԽՈՅԱՆՔ» ՍՊԸ

*(լիցենզիան տալու տարեթիվը, ամիսը, օրը, քաղաքաշինության գործունեության սուբյեկտի անվանումը,*

ՀՀ, ԿՈՏԱՅՔ, ՀՐԱԶԴԱՆ, ՀՐԱԶԴԱՆ, ՄԱՔՐԱՎԱՆ ԹԱՂ. Ն.ՇՆՈՐՀԱԼՈՒ Փ., 19

*գտնվելու վայրը՝ այդ թվում, անհատ ձեռնակատիրոջ դեպքում՝ անունը, ազգանունը և բնակության վայրը)*

Գործողության ժամկետը՝ 10.10.2029թ.

*(օրը, ամիսը, տարեթիվը)*

ՀՍԿԻՉ ՀԱՄԱՐ՝ **UG94-3416-D2A4-F6A6**

Սույն փաստաթուղթը տրված է բացառապես էլեկտրոնային եղանակով: Փաստաթղթի վավերականության ստուգումն ու էլեկտրոնային բնօրինակի ներբեռնումը հնարավոր է իրականացնել https://verify.e-gov.am Հայաստանի Հանրապետության պաշտոնական փաստաթղթերի վավերականության ստուգման միասնական համակարգի կայքում մուտքագրելով հսկիչ համարը կամ սքանավորելով արագ արձագանքման ծածկագիրը (QR Code):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

# ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՆԵՐԴԻՐ

ՔՊՆ-001379-05

*(ներդիրի սերիան, համարը)*

«ԽՈՅԱՆՔ» ՍՊԸ

*(լիցենզավորված քաղաքաշինության գործունեության սուբյեկտի անվանումը)*

ԷԼԵԿՏՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ (ԷԼԵԿՏՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ, ԷԼԵԿՏՐԱԼՈՒՍԱՎՈՐՄԱՆ ՆԵՐՔԻՆ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ՑԱՆՑԵՐ, ԷԼԵԿՏՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐ, ՖՈՏՈՎՈԼՏԱՅԻՆ ԵՎ ՀՈՂՄԱԷՆԵՐԳԵՏԻԿ ԿԱՅԱՆՆԵՐ)

*(քաղաքաշինության բնագավառում գործունեության ենթատեսակը)*

19.11.2024թ.

*(ներդիրը տալու օրը, ամիսը, տարեթիվը)*

Գործողության ժամկետը՝ 10.10.2029թ.

*(օրը, ամիսը, տարեթիվը)*

Ներդիրը վավերական է լիցենզիայի առկայության դեպքում

ՀՍԿԻՉ ՀԱՄԱՐ՝ **UGDD-B4F2-A88D-497A**

Սույն փաստաթուղթը տրված է բացառապես էլեկտրոնային եղանակով: Փաստաթղթի վավերականության ստուգումն ու էլեկտրոնային բնօրինակի ներբեռնումը հնարավոր է իրականացնել https://verify.e-gov.am Հայաստանի Հանրապետության պաշտոնական փաստաթղթերի վավերականության ստուգման միասնական համակարգի կայքում մուտքագրելով հսկիչ համարը կամ սքանավորելով արագ արձագանքման ծածկագիրը (QR Code):

| Պատասխանատու մասնագետի/ների անձնագրային տվյալներ | հավաստագրի սերիա | հավաստագրի համար | ստանալու օր, ամիս, տարեթիվ |
|---|---|---|---|
| ԱՐԱՄ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ | Հ | 001822 | 2024-09-12 |

ՀՍԿԻՉ ՀԱՄԱՐ՝ UGDD-B4F2-A88D-497A
Սույն փաստաթուղթը տրված է բացառապես էլեկտրոնային եղանակով: Փաստաթղթի վավերականության ստուգումն ու էլեկտրոնային բնօրինակի ներբեռնումը հնարավոր է իրականացնել https://verify.e-gov.am Հայաստանի Հանրապետության պաշտոնական փաստաթղթերի վավերականության ստուգման միասնական համակարգի կայքում մուտքագրելով հսկիչ համարը կամ սքանավորելով արագ արձագանքման ծածկագիրը (QR Code):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

# ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՆԵՐԴԻՐ

ՔՊՆ-001379-08

*(ներդիրի սերիան, համարը)*

«ԽՈՅԱՆՔ» ՍՊԸ

*(լիցենզավորված քաղաքաշինության գործունեության սուբյեկտի անվանումը)*

ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ ԵՎ ՋՐԱՀԵՌԱՑՈՒՄ (ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԵՎ ՋՐԱՀԵՌԱՑՄԱՆ ՆԵՐՔԻՆ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ՑԱՆՑԵՐ, ՀԻԴՐՈՄԵԼՈՐԱՑԻԱ)

*(քաղաքաշինության բնագավառում գործունեության ենթատեսակը)*

10.10.2024թ.

*(ներդիրը տալու օրը, ամիսը, տարեթիվը)*

Գործողության ժամկետը՝ 10.10.2029թ.

*(օրը, ամիսը, տարեթիվը)*

Ներդիրը վավերական է լիցենզիայի առկայության դեպքում

ՀՍԿԻՉ ՀԱՄԱՐ՝ **UG15-EF3C-2898-8534**

Սույն փաստաթուղթը տրված է բացառապես էլեկտրոնային եղանակով: Փաստաթղթի վավերականության ստուգումն ու էլեկտրոնային բնօրինակի ներբեռնումը հնարավոր է իրականացնել https://verify.e-gov.am Հայաստանի Հանրապետության պաշտոնական փաստաթղթերի վավերականության ստուգման միասնական համակարգի կայքում մուտքագրելով հսկիչ համարը կամ սքանավորելով արագ արձագանքման ծածկագիրը (QR Code):

| Պատասխանատու մասնագետի/ների անձնագրային տվյալներ | հավաստագրի սերիա | հավաստագրի համար | ստանալու օր, ամիս, տարեթիվ |
|---|---|---|---|
| ՀԱՍՄԻԿ ՊՈՂՈՍՅԱՆ | Հ | 000677 | 2024-07-08 |

ՀՍԿԻՉ ՀԱՄԱՐ՝ **UG15-EF3C-2898-8534**
Սույն փաստաթուղթը տրված է բացառապես էլեկտրոնային եղանակով: Փաստաթղթի վավերականության ստուգումն ու էլեկտրոնային բնօրինակի ներբեռնումը հնարավոր է իրականացնել https://verify.e-gov.am Հայաստանի Հանրապետության պաշտոնական փաստաթղթերի վավերականության ստուգման միասնական համակարգի կայքում մուտքագրելով հսկիչ համարը կամ սքանավորելով արագ արձագանքման ծածկագիրը (QR Code):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

# ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՆԵՐԴԻՐ

ՔՊՆ-001379-06

*(ներդիրի սերիան, համարը)*

«ԽՈՅԱՆՔ» ՍՊԸ

*(լիցենզավորված քաղաքաշինության գործունեության սուբյեկտի անվանումը)*

ՋԵՐՄԱԳԱԶԱՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ ԵՎ ՕԴԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ (ՕԴԱՓՈԽՈՒԹՅԱՆ, ՋԵՌՈՒՑՄԱՆ ԵՎ ՕԴԻ ԼԱՎՈՐԱԿՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐ, ՋԵՐՄԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԵՎ ԳԱԶԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐ)

*(քաղաքաշինության բնագավառում գործունեության ենթատեսակը)*

11.10.2024թ.

*(ներդիրը տալու օրը, ամիսը, տարեթիվը)*

Գործողության ժամկետը՝ 10.10.2029թ.

*(օրը, ամիսը, տարեթիվը)*

Ներդիրը վավերական է լիցենզիայի առկայության դեպքում

ՀՍԿԻՉ ՀԱՄԱՐ՝ **UGF2-1BCA-1C3B-F5D4**

Սույն փաստաթուղթը տրված է բացառապես էլեկտրոնային եղանակով: Փաստաթղթի վավերականության ստուգումն ու էլեկտրոնային բնօրինակի ներբեռնումը հնարավոր է իրականացնել https://verify.e-gov.am Հայաստանի Հանրապետության պաշտոնական փաստաթղթերի վավերականության ստուգման միասնական համակարգի կայքում մուտքագրելով հսկիչ համարը կամ սքանավորելով արագ արձագանքման ծածկագիրը (QR Code):

| Պատասխանատու մասնագետի/ների անձնագրային տվյալներ | հավաստագրի սերիա | հավաստագրի համար | ստանալու օր, ամիս, տարեթիվ |
|---|---|---|---|
| ՎԱՐԴԱՆ ՀՈՎՍԵՓՅԱՆ | Հ | 001969 | 2024-09-13 |

ՀՍԿԻՉ ՀԱՄԱՐ՝ UGF2-1BCA-1C3B-F5D4
Սույն փաստաթուղթը տրված է բացառապես էլեկտրոնային եղանակով: Փաստաթղթի վավերականության ստուգումն ու էլեկտրոնային բնօրինակի ներբեռնումը հնարավոր է իրականացնել https://verify.e-gov.am Հայաստանի Հանրապետության պաշտոնական փաստաթղթերի վավերականության ստուգման միասնական համակարգի կայքում մուտքագրելով հսկիչ համարը կամ սքանավորելով արագ արձագանքման ծածկագիրը (QR Code):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

# ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՆԵՐԴԻՐ

ՔՊՆ-001379-10

*(ներդիրի սերիան, համարը)*

«ԽՈՅԱՆՔ» ՍՊԸ

*(լիցենզավորված քաղաքաշինության գործունեության սուբյեկտի անվանումը)*

ԿԱՊԻ ՀԱՄԱԿԱՐԳԵՐ (ՀԵՌԱՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԴԱՆՇԱՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐ, ՀԱՂՈՐԴԱԿՆԵՐ, ԸՆԴՈՒՆԻՉՆԵՐ, ԱՆՏԵՆԱՆԵՐ, ՈՒԺԵՂԱՐԱՐՆԵՐ)

*(քաղաքաշինության բնագավառում գործունեության ենթատեսակը)*

22.10.2024թ.

*(ներդիրը տալու օրը, ամիսը, տարեթիվը)*

Գործողության ժամկետը՝ 10.10.2029թ.

*(օրը, ամիսը, տարեթիվը)*

Ներդիրը վավերական է լիցենզիայի առկայության դեպքում

ՀՍԿԻՉ ՀԱՄԱՐ՝ **UG2F-368F-ED3B-1D44**

Սույն փաստաթուղթը տրված է բացառապես էլեկտրոնային եղանակով: Փաստաթղթի վավերականության ստուգումն ու էլեկտրոնային բնօրինակի ներբեռնումը հնարավոր է իրականացնել https://verify.e-gov.am Հայաստանի Հանրապետության պաշտոնական փաստաթղթերի վավերականության ստուգման միասնական համակարգի կայքում մուտքագրելով հսկիչ համարը կամ սքանավորելով արագ արձագանքման ծածկագիրը (QR Code):

| Պատասխանատու մասնագետի/ների անձնագրային տվյալներ | հավաստագրի սերիա | հավաստագրի համար | ստանալու օր, ամիս, տարեթիվ |
|---|---|---|---|
| ԼՈՒՍԻՆԵ ՀՈՎՍԵՓՅԱՆ | Հ | 001683 | 2024-09-06 |

ՀՍԿԻՉ ՀԱՄԱՐ՝ UG2F-368F-ED3B-1D44
Սույն փաստաթուղթը տրված է բացառապես էլեկտրոնային եղանակով: Փաստաթղթի վավերականության ստուգումն ու էլեկտրոնային բնօրինակի ներբեռնումը հնարավոր է իրականացնել https://verify.e-gov.am Հայաստանի Հանրապետության պաշտոնական փաստաթղթերի վավերականության ստուգման միասնական համակարգի կայքում մուտքագրելով հսկիչ համարը կամ սքանավորելով արագ արձագանքման ծածկագիրը (QR Code):